ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ 2022-2023Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Արտաշատ – 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ 4
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 5
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 10
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 17
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 40
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 55
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 61
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 66
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 72
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 81
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 89
Հավելված 1 90
Հավելված 2 91
Հավելված 3 92
Հավելված 4 94
Հավելված 5 96
Հավելված 6 99
Հավելված 7 102
Հավելված 8 105
Հավելված 9 108

ՆԱԽԱԲԱՆ

Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԱՏՊՔ, Քոլեջ) ներքին գնահատումը իրականացվել է նույն հաստատության որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից։

Ներքին գնահատումը Քոլեջի կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Այն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը։ Ներքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերմանը մասնակցում են Քոլեջի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, գործընկերները և այլ շահակիցներ։

Քոլեջի ներքին գնահատման իրականացումը նպատակ ունի բարելավելու կրթական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստելու գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի արդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով։

Ներքին գնահատումը ներկայացնում է ԱՏՊՔ–ի 2022-2023 ուսումնական տարվա մշտադիտարկման արդյունքները՝ ըստ առաքելության ապահովման 10 հիմնական ուղղությունների։

Քոլեջի 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման աշխատանքները համակարգվել են Քոլեջի տնօրենի կողմից և իրականացվել Որակի ներքին ապահովման կենտրոնի հանձնաժողովի / այսուհետ՝ ՈՆԱԿ / կողմից՝

ՈՆԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ՝

1. Նազարյան Մարիամ – Կրթության որակի պատասխանատու
2. Մեջլումյան Մարինե – Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
3. Աբրահամյան Անահիտ – Կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
4. Բաբայան Հակոբ – Վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
5. Հայրապետյան Լիլիթ – Կադրերի բաժնի վարիչ
6. Ղարիբյան Քրիստինե – Ուսումնական մասի վարիչ
7. Մխիթարյան Հայկուհի - Ուսումնական մասի վարիչ
8. Սարգսյան Հրանուշ – Կարիերայի ուղղորդման պատասխանատու
9. Դավթյան Արթուր - Կարիերայի ուղղորդման պատասխանատու
10. Վարտանյան Եվգենյա – Պրակտիկայի բաժնի վարիչ
11. Միքայելյան Հռիփսիմե - Պրակտիկայի բաժնի վարիչ
12. Կարապետյան Լարիսա – Մեթոդիստ
13. Գալստյան Մարգարիտա - Գրադարանավար
14. Հարթությունյան Անի – Հանրակրթական ծրագրերի բաժնի վարիչ
15. Հարությունյան Ռուզաննա – Ամբիոնի վարիչ
16. Արզումանյան Օֆելյա - Ամբիոնի վարիչ
17. Հովհաննիսյան Դավիթ - Ամբիոնի վարիչ
18. Հակոբյան Անի - Ամբիոնի վարիչ
19. Նաղդալյան Փառիկ - Դասախոս
20. Սուքիասյան Մանուկ – Դասախոս
21. Միրզոյան Միլենա – Ուսանողության ներկայացուցիչ
22. Սիրեկանյան Սաթենի - Ուսանողության ներկայացուցիչ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հանդիսանալով ՀՀ կրթության համակարգի բաղկացուցիչ մաս, լինելով տարածաշրջանում խոշորագույն կրթական կենտրոն՝ Քոլեջը որդեգրել է հետևյալ առաքելությունը.

Ապահովել տարածաշրջանում միջին և նախնական մասնագիտական կրթությամբ տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստումը՝ ծառայելով աշխատաշուկայում համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով մասնագետներ զինելու գործին :

Նախորդ 5 տարիների համար Քոլեջի որդեգրած առաքելության համար ռազմավարական ծրագրով /այսուհետ՝ ՌԾ/ սահմանվել են թվով 5 ռազմավարական նպատակներ, դրանց իրագործման համար նախանշվել են 15 խնդիրներ, յուրաքանչյուր խնդրի համար առանձնացվել են անհրաժեշտ քայլերն ու առաջընթացի գնահատման ցուցիչները:

2022-2023 ուս. տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքները ուղղված են եղել Քոլեջի որդեգրած առաքելության կատարմանը: Նշված աշխատանքների կազմակերպումը և դրանց հաշվետվողականության ապահովումը հիմնված է եղել Քոլեջի կազմակերպական կառուցվածքի *(Հավելված 1)* և ներքին հաշվետվողականության ապահովման գրաֆիկական կառուցվածքի *(Հավելված 2)* վրա:

Կատարված աշխատանքների թիրախայնության ընդլայման, դրանց որակի և ծավալի վրա ավելի համակարգված ներգործելու համար անհրաժեշտություն է առաջացել վերանայել գործող որոշ ներքին իրավական ակտեր (այսուհետ՝ ՆԻԱ) և մշակել նորերը՝ ստանդարտացնելով և օրինաչափ դարձնելով դրանցում նշված գործընթացների կատարման հաճախականությունը՝ մտնցելով դրանք ՊԻԳԲ շրջափուլ:

Աղ.1. 2022-2023 ուս. տարվա ընթացքում նոր մշակված/վերանայված ՆԻԱ ցանկ:

N	ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ	Հաստատվել է Կառավարման խորհրդի կողմից	Կարգավիճակ
1.	Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից ուսանողների բավարարվածության գնահատման	08.11.22	Վերանայված
2.	Շրջանավարտների կողմից Քոլեջից բավարարվածության գնահատման	08.11.22	Վերանայված
3.	Ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման	08.11.22	Վերանայված
4.	Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատակիցների բավարարվածության գնահատման	08.11.22	Վերանայված

5.	ՈՒԽ-ի կատարած աշխատանքների արդյունավետության և որակի գնահատման	08.11.22	Վերանայված
6.	Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության գնահատման և քոլեջի հետ համագործակցության հնարավորությունների հարցման	08.11.22	Վերանայված
7.	Առաջին կուրսի/նոր ընդունված ուսանողների հարցման	31.08.22	Վերանայված
8.	Պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման	08.11.22	Վերանայված
9.	Ծնողի բավարարվածության գնահատման	08.11.22	Վերանայված
10.	Կուրսային աշխատանքներից ուսանողների բավարարվածության գնահատման	08.11.22	Վերանայված
11.	Սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության վերաբերյալ շահակիցների բավարարվածության	08.11.22	Վերանայված
12.	Քոլեջի ներքին հաշվետվողականությունն ապահովվող հաշվետվությունների ներկայացման կանոնակարգ	08.11.22	Վերանայված
13.	Ուսանողների կողմից ուսումնական գործունեության հետ առընչվող գործընթացի բողոքարկման	31.08.22	Վերանայված
14.	Մասնագիտական կողմնորոշման նպատակով ճանաչողական այցից բավարարվածության գնահատման	06.02.23	Նոր ներդրված
15.	Քննությունների և պրակտիկաների ամփոփման ընթացքում որակի պահպանման հաշվետվությունների	06.02.23	Նոր ներդրված
16.	Պրակտիկաների արդյունավետության արժանահավատության հարցման	23.08.23	Նոր ներդրված
17.	Գործատուների կողմից ուսանողների մասնագիտական պատրաստվածության գնահատման	08.11.22	Գործածությունից դուրս եկած
N	**ԿԱՐԳԵՐ**	**Հաստատվել է Կառավարման խորհրդի կողմից**	**Կարգավիճակ**
1.	Մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերի և բնութագրիչների սահմանման	28.12.22	Վերանայված
N	**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**	**Հաստատվել է Կառավարման խորհրդի կողմից**	**Կարգավիճակ**

1.	Տնօրենի ընտրության	15.02.23	Վերանայված
2.	Ուսանողների պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման	31.08.22	Վերանայված
3.	Ուսանողների գիտելիքների, կարողությունների ստուգման, կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորման, պարտքերի մարման, ուսանողների կողմից բաց թողած դասաժամերի վերականգման	31.08.22	Վերանայված
4.	Ռեֆերատների կազմակերպման, իրականացման և գնահատման	28.12.22	Նոր ներդրված
N	**ՈՒՂԵՑՈՒՑՑԵՐ**	**Հաստատվել է Մանկավարժական խորհրդի կողմից**	**Կարգավիճակ**
1.	Ուսանողի ուղեցույց	31.08.22	Վերանայված

Ուս. տարվա ընթացքում Քոլեջում իրականացված կրթական գործընթացները ամբողջությամբ բխել են ՌԾ-ով սահմանված նպատակներից և դրանց համապատշաճ խնդիրներից: Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ ֆունկցիոնալ մարմինների աշխատանքային պլաններն ընդհանուր առմամբ ածանցվել են 2022-2023թ. պլան ժամանակացույցից և ապահովել են Քոլեջի տարեկան պլան-ժամանակացույցի կատարողականի ծածկողականությունը, իսկ ամբիոնների և հանրակրթական ծրագրերի բաժնի հաշվետվություններն ամբողջությամբ համապատասխանել են վերջիններիս տարեկան աշխատանքային պլաններին:

Առաքելության իրականացմանը նպաստելու և աշխատակազմի շարժի հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար, Քոլեջը հետևողական է աշխատողների օպտիմալ թվի պահպանմանը՝ նկատառելով իր ֆինանսական և ենթակառուցվածքային հնարավորություն-ները և կրթության որակի շարունակական բարձրացման նկրտումները:

Աղ.2. 2019-2023թթ. ընթացքում աշխատողների թվի դինամիկա՝ ըստ տարիքային շեմերի:

2019 /սեպտեմբեր/ /63 աշխատող +2 ֆիզ/		
> 65	**36-64**	**35 տարեկանից ցածր**
12-18%	26-40%	25 /2/ 42%
2020/սեպտեմբեր/ /67 աշխատող +4 ֆիզ/		
15-21%	26-37%	26 /+4/ 42%
2021/սեպտեմբեր/ /73 աշխատող+6 ֆիզ/		
12-15%	28-35%	33 /+6/ 50%
2022/սեպտեմբեր/ /79 աշխատող+7 ֆիզ/		
13-15%	35-40%	32 /+7/ 45%
2023/հունվար/ /79 աշխատող+8 ֆիզ/		
13-15%	35-40%	31 /8/ 45%

ԱՏՊՔ-ի ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և նրանց առջև հաշվետվողականության, թափանցիկության ապահովման դիտավորությունից ելնելով վերանայվել են հարցումների անցկացման բոլոր գործող կանոնակարգերը *(Աղյուսակ 1)*: Վերջինս թույլ է տվել ընդլայնել հարցման անցկացման նպատակը, հստակ ուրվագծել հետազոտվող ընտրանքը, հարցումը դարձնել ավելի արժանահավատ՝ մասշտաբի էֆեկտի և օնլայն հարթակների կիրառման միջոցով: Վերանայման, թերևս, ամենակարևոր բաղադրիչը հարցման անցկացման հստակ ժամանակային կարգավորումն է՝ որպես մշտադիտարկման կայուն գործիք, ինչպես նաև հարցումը՝ որպես համապարփակ գնահատման գործիք դարձնելու անհրաժեշտությունը:

Հարցումների արդյունքում ստացված մուտքային տվյալները ԱՏՊՔ-ի համար հիմք են հանդիսացել հետագա ռազմավարական և ուսումնական գործընթացների պլանավորման համար, որոնք իրենց տեղը կգտնեն համապատասխան ֆունկցիոնալ մարմնի 2023-2024թթ. աշխատանքային պլանում:

Դասալսումները՝ որպես մշտադիտարկման տեսանելի գործիք, ապահովում են մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) և պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴ կազմ) ընթացիկ գնահատումը, թույլ են տալիս վեր հանել խնդիրներ և առաջ քաշել լուծումներ՝ ուղղված լսարան-դասախոս փոխներգործության ամրապնդմանը:

Գծապատկերից ակնառու է դառնում, որ ԱՏՊՔ-ն իր ինստիտուցիոնալ կայացման ճանապարհին առանձնահատուկ ուշադրություն է դարձնում իրականացվող դասալսումներին:

Գծ.1. Նախորդ երկու ուս. տարիների և ընթացիկ տարվա ընթացքում կատարված դասալսումների դինամիկա:



Առանձնահատուկ ուշագրավ է, 2022-2023 ուս. տարվա ընթացքում գործընկերների հետ կնքված պրակտիկայի պայմանագրերի և հուշագրերի թվի աճը: Սա փաստում է Քոլեջի սկզբունքայնությունը՝ ուղղված սեփական հանձնառության կատարմանը և թույլ է տալիս վարել աշխատաշուկայակենտրոն մոտեցում՝ հակված ներքին շահակիցների գոհունակության մակարդակի բարձրացմանը և արտաքին շահակիցների հետ ընդհանուր հետաքրքրությունների բավարարմանը:

Գծ.2. 2018-2019 ---2022-2023 ուս. տարիների ընթացքում կնքված պրակտիկայի պայմանագրերի և հուշագրերի թվի դինամիկա:



II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի կառավարման մարմինների ու կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը և այլ օղակների հետ փոխհարաբերությունները կարգավորվում են Քոլեջի կանոնադրությամբ՝ ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի, ներքին կարգապահական կանոնների և այլ իրավական ակտերի համաձայն: Կառավարչական աշխատանքներն առավել արդյունավետ կանոնակարգելու համար գործում են մեծ քանակությամբ՝ թվով 76 ներքին իրավական ակտեր՝ կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր:

Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության, լիազորված մարմինը՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ն, Քոլեջի կառավարման խորհուրդը, Քոլեջի գործադիր մարմինը՝ տնօրենը: Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, Քոլեջի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Կազմակերպական կառուցվածքով Քոլեջի կառավարման մարմիններն են՝ կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ուսումնամեթոդական խորհուրդը: Քոլեջում գործում է նաև ՈՒԽ:

Քոլեջի կառավարման խորհուրդն ունի լիազորված մարմնի կողմից հաստատված նոր կազմ:

Աղ.3. Կառավարման խորհրդի կազմը:

1	Արթուր Մկրտչյան Սուրենի	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի գլխավոր քարտուղար - հիմնադրի ներկայացուցիչ
2	Լուսինե Կիրակոսյան Արթուրի	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի ավագ մասնագետ - լիազոր մարմնի ներկայացուցիչ
3	Արմինե Պողոսյան Գաբրիելի	Միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ մասնագետ - զբաղվածության ոլորտի ներկայացուցիչ
4	Հարություն Միսակյան Գաբրիելի	դասախոսական կազմի ներկայացուցիչ
5	Աննա Զաքարյան Ռաֆիկի	դասախոսական կազմի ներկայացուցիչ
6	Դավիթ Գաբրիելյան Արմենի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
7	Անի Գրիգորյան Հովհաննեսի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
8	Սոնա Խաչատրյան Գեղամի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
9	Արմեն Սարգսյան Սարգսի	«Գառանտ -Դենտ» ստոմատոլոգիական կլինիկայի տնօրեն - գործատուների ներկայացուցիչ
10	Կարապետ Մարգարյան Ռաֆիկի	«Ֆարմ-Մակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն - գործատուների ներկայացուցիչ
11	Մուշեղ Սարգսյան Բուրդելի	Արարատի մարզի Տափերական համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցիչ - արհմիության ներկայացուցիչ

ԱՏՊՔ-ն մշակում և իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ կառուցակարգեր: Կարճաժամկետ պլանավորումն ու դրանց կատարողականները ներկայացվում են յուրաքանչյուր տարվա կտրվածքով: Այսպես, 2022թ. կատարողականում արդեն իսկ նշված են նույն տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացված աշխատանքները, վերջիններիս կատարման

պատասխանատուներին և օգտագործված ռեսուրսների կազմը։ 2023թ. կատարողականի տվյալները ամփոփված են միայն հունվար-հուլիս ամիսների համար, հետևաբար տարվա ընթացքում ողջ կատարված աշխատանքները կարելի կլինի ամփոփել միայն սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ավարտից հետո։

Քոլեջում ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմները իրականացվում են բյուջեի հոդվածներով, որոնց հիմնավորումը կարևոր չափանիշ է և դրսևորվում է գործունեության նկարագրություններով, որոնք սահմանվում են գնումների պլանով՝ պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացվող հայտերի հիման վրա։

Քոլեջի գործունեությունն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, որտեղ գերակշռում են ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտները։ Քոլեջն ունի նաև արտաբյուջե, որտեղ մուտքերի գերակշիռ մասը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, մուտքեր են առկա նաև վարձակալական վճարներից, վճարովի լրացուցիչ կարճաժամկետ դասընթացների ուսման վարձավճարներից, որոնք վերջին տարիներին դինամիկ աճ են ապահովել։ 2023թ. տվյալներով բյուջետային մուտքերը (դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտներ) կազմել են ընդամենը գործառնական եկամուտների 76,4%-ը, արտաբյուջետային մուտքերը՝ 23,6%-ը։

Նախահաշվի կազմման ժամանակ հաշվի է առնվում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղվող միջոցների և անհրաժեշտ ռեսուրսների պահանջը։ Ծախսերի մեծ մասը՝ շուրջ 81%-ը, բաժին է ընկնում աշխատանքի վարձատրությանը։ Եկամուտների մասով այլ մուտքերի ավելացումը ունի դրական միտում և նպաստում է Քոլեջի գործունեության կրթական ծրագրերի երաշխավորված շարունակականությանը։ Քոլեջում ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը հիմնված է ֆինանսական համակարգի կատարելագործման, ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա։

Քոլեջն իր ծախսային հոդվածների զգալի մասն ուղղում է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, դրան զուգահեռ աշխատավարձի ֆոնդի փոխհատուցումից, կրթաթոշակների վճարումից և պահպանության ծախսերից հետո ազատված դրամական միջոցների շուրջ 24%-ը Քոլեջն ուղղում է պրակտիկաների կազմակերպմանը, լաբորատոր նյութերի և մասնագիտական սարքավորումների, ուսումնական նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերմանը՝ նպաստելով ՄԿԾ-ների առավել արդյունավետ իրականացմանը։

Գծ. 3. Վերջին 5 տարիների արտաբյուջետային միջոցների քանակական վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով։



Քոլեջի ֆունկցիոնալ մարմինների աշխատանքի արժանիքահեն և համակողմ գնահատման համար իրականացվել են հարցումներ ուսանողների և աշխատակիցների շրջանում։

26.06-07.07/2023թ ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան «Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատակիցների բավարարվածության գնահատման» կանոնակարգի, Քոլեջի աշխատակիցների շրջանում կատարվել են օնլայն անանուն հարցումներ՝ ուղղված քոլեջում յուրաքանչյուր ֆունկցիոնալ մարմնի աշխատանքի որակի արդյունավետության գնահատմանն ու բարելավմանը։

Հարցումն անցկացվել է օնլայն տարբերակով՝ ապահովելով Քոլեջի աշխատակիցների առնվազն 75%-ի մասնակցությունը հունիսի 26-ից սկսած 10 աշխատանքային օրերի ընթացքում։ Ընդհանուր ընտրանքը կազմել է 55 աշխատակից։

«Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատակիցների բավարարվածության գնահատման» հարցման պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ բոլոր ֆունկցիոնալ մարմինները հատել են 80% բավարարվածության շեմը։

Նշված հանգամանքը փաստում է, որ Քոլեջի աշխատակիցները բավարարված են Քոլեջում առանձին ֆունկցիոնալ պարտականություններ կատարող անձանց աշխատանքից և դրականորեն են գնահատել նրանց կատարած աշխատանքի որակը։

Չնայած վերը նշվածին, հարցումը թույլ է տվել վեր հանել որոշակի խնդիրներ, որոնց լուծման պարագայում Քոլեջը կգրանցի էական առաջընթաց ֆունկցիոնալ մարմինների աշխատանքի որակում։ Կոնֆիդենցիալության պահպանման համար վերլուծության մեջ չեն մանրամասվում բարելավման մեխանիզմները։

Գծ.4. Քոլեջի աշխատակիցների կողմից ֆունկցիոնալ մարմինների գնահատման արդյունքները /55 աշխատակից/:



18.01-31.02/2023թ. ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան «Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից ուսանողների բավարարվածության գնահատման» կանոնակարգի, Քոլեջի ուսանողության շրջանում կատարվել են օնլայն անանուն հարցումներ՝ ուղղված Քոլեջում յուրաքանչյուր ֆունկցիոնալ մարմնի աշխատանքի և ենթակառուցվածքային պայմանների որակի արդյունավետության գնահատմանն ու բարելավմանը:

Հարցումն անցկացվել է օնլայն տարբերակով՝ ապահովելով՝ յուրաքանչյուր կուրսի ուսանողների առնվազն 75%-ի մասնակցությունը հունվարի 18-ից սկսած 15 աշխատանքային օրերի ընթացքում: Ընդհանուր ընտրանքը կազմել է 422 ուսանող:

«Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատակիցների բավարարվածության գնահատման» հարցման պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ ֆունկցիոնալ մարմինների 89%-ը հատել են 80% բավարարվածության շեմը և միայն 11%-ն է գտնվել շեմից ներքև:

Նշված հանգամանքը փաստում է, որ Քոլեջի ուսանողները մեծամասամբ բավարարված են եղել Քոլեջում առանձին ֆունկցիոնալ պարտականություններ կատարող անձանց աշխատանքից և դրականորեն են գնահատել նրանց կատարած աշխատանքի որակը:

Չնայած վերը նշվածին, հարցումը թույլ է տվել վեր հանել որոշակի խնդիրներ, որոնց լուծման պարագայում Քոլեջը կգրանցի առաջընթաց ֆունկցիոնալ մարմինների աշխատանքի որակում: Կոնֆիդենցիալության պահպանման համար վերլուծության մեջ չեն մանրամասվում բարելավման մեխանիզմները:

Գծ.5. Քոլեջի ուսանողների կողմից ֆունկցիոնալ մարմինների գնահատման արդյունքները /422 ուսանող/:



Կրթության որակի պատասխանատուն յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնում է ամբիոնների/բաժինների մշտադիտարկում: 2022-2023 ուստարվա մշտադիտարկման արդյունքում ոչ միայն արձանագրվել են կատարված աշխատանքները, այլ նաև գնահատվել: Վերջինս թույլ է տալիս կոնկրետ գնահատականներ տալ առանձին գործընթացներին՝ դրանով իսկ բնորոշելով իրականացված գործընթացի որակը:

Խնդիրները, որոնք վեր են հանվել մշտադիտարկման գործիքների միջոցով (հարցումներ, ուսանողների հետ հանդիպումներ, ամբիոնների մշտադիտարկում, դասալսումներ և այլն), մտնելու են առանձին ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հետագայում վերլուծվելու են հաշվետվության մեջ:

Աղ.4. 2022-2023 ուս. տարվա մշտադիտարկման արդյունքների ամփոփ ներկայացում:

	Հանրակրթական ծրագրերի բաժին	Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների ամբիոն	Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ամբիոն	Արվեստի և սպասարկման ծառայությունների ամբիոն	Առողջապահության ամբիոն	Արդյունաբերության և տրանսպորտի ծառայությունների ամբիոն
Աշխատանքային պլան	5	5	5	5	5	5
Աշխատանք. պլան-տարեկան հաշվետվ. համապատասխանությունը	5	5	4	5	5	5
Դասախոսների տարեկան բեռնվածություն	5	5	5	5	5	5
Ուսումնական պլաններ	5	5	5	5	5	5
Առարկայական/մոդուլային ծրագրեր	5	5	5	5	5	5
Նիստերի արձանագրություն	5	5	5	5	5	5
Դասալսումներ	5	5	5	5	3	4
Մեթոդամանկավարժական ընթերցումներ	5	5	4	5	5	1
Դասախոսի անհատական փաթեթներ (պորտֆոլիո)	4	5	4	3	3	2

Շրջանավարտների շրջանում իրականացված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտների շուրջ 80%-ը իրենց գոհունակությունն են արտահայտել պետական ամփոփիչ ստուգման նախապատրաստական աշխատանքներից և գտել են, որ դրանք կազմակերպվել են պատշաճ մակարդակով: Իսկ հարցին, արդյո՞ք պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ստուգվել են Քոլեջում իրենց ձեռք բերված գիտելիքները, շրջանավարտների 80%-ը դրականորեն են արձագանքել:

Գծ. 6. «Պետական ամփոփիչ ստուգման նախապատրաստական աշխատանքները կազմակերպվեցին պատշաճ կերպով» հարցին շրջանավարտների պատասխանները /122 շրջանավարտ/:



Գծ.7. «Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ստուգվեցին Քոլեջում ձեռք բերված մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները» հարցին շրջանավարտների պատասխանները /122 շրջանավարտ/:



III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԱՏՊՔ-ն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում: 2022-2023 ուս. տարվա ընթացքում Քոլեջում իրականացվել են 9 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր և 2 նախնական մասնագիտական կրթական ծրագրեր:

Աղ.5. 2022-2023 ուս. տարվա մասնագիտական կրթական ծրագրերի ցանկ:

Դասիչը	Մասնագիտությունը	Կրթ.աստիճանը /մ/մ, ն/մ/	Որակավորումը
Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի ՄԿԾ-ներ			
0613.01.5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	մ/մ	տեխնիկ-ծրագրավորող
0613.02.5	Համակարգչային գեղարվեստական նախագծում	մ/մ	վեբ-դիզայներ
Առողջապահության ոլորտի ՄԿԾ-ներ			
0916.01.5	Դեղագործություն	մ/մ	դեղագործ
0911.01.5	Ատամնատեխնիկական գործ	մ/մ	ատամնատեխնիկ
Արվեստի և սպասարկման ծառայությունների ոլորտի ՄԿԾ-ներ			
1012.02.5	առաջ	մ/մ	դիմահարդար-կոսմետոլոգ
0212.02.5	Հագուստի մոդելավորում և նախագծում	մ/մ	հագուստի մոդելավորող և նախագծող
1013.04.4	Խոհարարական գործ	ն/մ	խոհարար
Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ոլորտի ՄԿԾ-ներ			
0411.01.5	Հաշվապահական հաշվառում	մ/մ	հաշվապահ
Արդյունաբերության և տրանսպորտային ծառայությունների ոլորտի ՄԿԾ-ներ			
1041.01.5	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	մ/մ	տեխնիկ-կարգավար՝տրանսպորտում փոխադրումների կազմակերպման և կառավարման
0715.15.5	Սառնարանային տնտեսություն	մ/մ	տեխնիկ՝սառնարանայի և տնտեսության
0715.03.4	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	ն/մ	գազաեռակցող

Ինչ վերաբերում է լրացուցիչ կարճաժամկետ դասընթացներին, 2022-2023 ուս. տարվա ընթացքում գործող ԼԿԾ-ներից իրականացվել է 4-ը՝ այդ թվում «Սառնարանային տնտեսություն», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Խոհարարական գործ»:

ՄԿԾ-ներում սահմանված կարգով փոփոխություններ անելիս հաշվի են առնվում հարցումների արդյունքները, պետական որակավորող հանձնաժողովների նախագահների,

գործատուների, ինչպես նաև դասավանդող դասախոսների կողմից արվող առաջարկություն-ները։

Բոլոր գործող ՄԿԾ-ներում կատարվել են փոփոխություններ, որոնք ուղղված են եղել կրթական ծրագրի արդիականացմանը, աշխատաշուկայի պահանջներին համահունչ առանձին դասընթացներով համալրմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել ՄԿԾ-ների մրցունակությունն ու գրավչությունը։

Գծ.8. Վերջին 5 ուսումնական տարիներին վերանայված և փոփոխված ՄԿԾ-ների քանակը՝ արտահայտված %-ով։



09.02-22.02/2023թ ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան «Պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման» կանոնակարգի, քոլեջի ուսանողության շրջանում կատարվել են օնլայն անանուն հարցումներ՝ ուղղված պրակտիկայի յուրաքանչյուր մոդուլի որակի արդյունավետության գնահատմանն ու բարելավմանը, ինչպես նաև պրակտիկային առնչվող առանձին գործընթացների լավորակմանը։

Հարցումն անցկացվել է օնլայն տարբերակով՝ ապահովելով յուրաքանչյուր մասնագիտական կուրսի ուսանողների առնվազն 75%-ի մասնակցությունը փետրվարի 9-ից սկսած 10 աշխատանքային օրերի ընթացքում։ Ընդհանուր ընտրանքը կազմել է 422 ուսանող։

Հարցումը բաղկացած է եղել պնդումների փնջից, առաջարկությունների բաժնից՝ միտված պրակիտիկաների բարելավմանը, ինչպես նաև լրացուցիչ նշումներ բաժնից։

«Պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման» հարցման պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ գնահատման արդյունքում անցկացված ուսումնական/արտադրական պրակտիկաների 67%-ը հատել է 80% բավարարվածության շեմը, որից 35%-ը՝ 80-90% միջակայքում, 9%-ը՝ 90-95% միջակայքում, 19%-ը՝ 95-100% միջակայքում։

Գծ.9. Պրակտիկայի մոդուլների գնահատման վերաբերյալ արդյունքների վերլուծության միջակայքային տվյալներ \422 պատասխան\:



Աղ.6. Անցկացված պրակտիկաների մոդուլների քանակը՝ համապատասխան յուրաքանչյուր մասնագիտությանը:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆՑԿԱՑՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	
	Շեմը հաղթահարած (80%)	Շեմը չհաղթահարած (<80%)
0916.01.5 « Դեղագործություն »	4	3
0613.01.5 «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	4	4
1012.02.5 «Կոսմետիկայի դիմահարդարման արվեստ»	2	3
0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ»	2	-
0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»	4	-
0212.02.5 «Հագուստի մոդելավորում և նախագծում»	3	2
1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»	2	4
0715.15.5 «Սառնարանային տնտեսություն»	6	-
Ընդամենը	27	16

Վերլուծությունների արդյունքում անցողիկ շեմը (80%) չհատած, ինչպես նաև հատած և միևնույն ժամանակ կոնկրետ առաջարկներ ստացած պրակտիկայի մոդուլների համար մշակվել են բարելավման անհրաժեշտ քայլեր, որոնք ներկայացվել են կոնկրետ պատասխանատուներին, սահմանվել են բարելավման ժամկետներ:

Յուրաքանչյուր բարելավման մեխանիզմ մշակվել և հիմնված է եղել ներքոնշյալ կետերի վրա.

Նշված մոդուլից ստացված գիտելիքները համարում եք բավարար
Նշված մոդուլի համար նպատակահարմար է սահմանված պրակտիկայի անցկացումը

Պրակտիկայի տևողությունը բավարար էր
Պրակտիկան կազմակերպված էր պատշաճ և որակով
Ուսուցողական նյութերը պարզ էին, մատչելի և նպաստեցին տեղեկատվության խորացմանն ու ամրապնդմանը
Տրված հանձնարարությունները օգտակար էին
Ես կկարողանամ ստացված գիտելիքները կիրառել հետագայում
Պրակտիկայի ղեկավարը պրակտիկան վարում էր անմիջական և մատչելի ձևով
Պրակտիկան գնահատվեց սահմանված գնահատման չափանիշներին համապատասխան
Պրակտիկան համապատասխանում էր իմ ակնկալիքներին

Չխախտելով էթիկական վարվեցողության նորմերը և պահպանելով կոնֆիդենցիալությունը վերլուծության մեջ նշված չեն պրակտիկայի չհաղթահարված մոդուլների անվանումները, դրանց տոկոսային գնահատականը և բարելավման մեխանիզմները:

Քննությունների անցկացման և պրակտիկաների հաշվետվության պաշտպանության ընթացքի վերահսկողության և որակի գնահատման նպատակով Քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնի անդամները՝ համապատասխան կանոնակարգի, ներկայացնում են հաշվետվություն կանոնակարգերում նշված ձևաչափերին համապատասխան:

2022-2023 ուս. տարվա ընթացքում I և II կիսամյակների ներկայացված հաշվետվությունների վերլուծության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ քննության անցկացման և պրակտիկայի հաշվետվության պահպանության ընթացքը եղել է կանոնակարգված և մեծապես համապատասխանել ԱՏՊՔ-ի ներքին իրավական ակտերին:

2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տեղի ունեցած թվով 37 քննությունների և 46 պրակտիկայի հաշվետվության պաշտպանության հաշվետվությունների արդյունքների համապարփակ վերլուծությունը բովանդակեց ՈՆԱԿ հանձնաժողովի անդամների կողմից արձանագրված տվյալները յուրաքանչյուր նորմատիվի համար և թույլ տվեց վեր հանել արձանագրված խախտումները:

Գծ.10. Քննության որակի հաշվետվությունների ամփոփ նկարագիրը /առաջին կիսամյակ/:











Գծ.11. Պրակտիկայի հաշվետվության պաշտպանության հաշվետվությունների ամփոփ նկարագիր/առաջին կիսամյակ/։







2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում տեղի ունեցած թվով 46 քննությունների և 53 պրակտիկայի հաշվետվության պաշտպանության հաշվետվությունների արդյունքների համապարփակ վերլուծությունը բովանդակեց ՈՆԱԿ հանձնաժողովի անդամների կողմից արձանագրված տվյալները յուրաքանչյուր նորմատիվի համար և թույլ տվեց վեր հանել արձանագրված խախտումները։

Գծ.12. Քննության որակի հաշվետվությունների ամփոփ նկարագիրը /երկրորդ կիսամյակ/։






Դասախոսը հաշվի էր առնում սոցիալական շփման գործընթացում ուսանողի անհատականությունը
0%
4%
96%
Պահպանվել է
Մասամբ
Չի պահպանվել


Քննության գնահատումը իրականացվեց օբյեկտիվ հիմքերի վրա՝ պահպանելով գնահատման չափանիշները
0%
20%
80%
Պահպանվել է
Մասամբ
Չի պահպանվել


Դասախոսը սահմանված կարգով անցկացնում էր քննության ընթացքը
0%
4%
96%
Պահպանվել է
Մասամբ
Չի պահպանվել

Գծ.13. Պրակտիկայի հաշվետվության պաշտպանության հաշվետվությունների ամփոփ նկարագիր/երկրորդ կիսամյակ/։







Քննության անցկացման և պրակտիկաների հաշվետվության պաշտպանության ընթացքում արձանագրված խախտման դեպքերի առնչությամբ տեղի են ունեցել անհատական հանդիպումներ նորմատիվը չպահպանած/թերի պահպանած դասախոսների, ԱՏՊՔ տնօրեն՝ Իս. Վարդանյանի, կրթության որակի պատասխանատու՝ Մ. Նազարյանի միջև։ Հանդիպումների ընթացքում քննարկվել է յուրաքանչյուր դասախոսի/պրակտիկայի ղեկավարի կողմից թույլ տրված թե րացում(ներ)ը։

Արձանագրված թերացումներից հետագայում խուսափելու համար հանձնարարվել է ամբիոնների վարիչներին բարձրացնել իրազեկվածությունը Քոլեջի համապատասխան ՆԻԱ-ների նկատմամբ, ինչպես նաև ամբիոնների աշխատանքային պլաններում վերջիններիս իրազեկվածության բարձրացման կայուն զարգացումը ներառել որպես մշտական գործառույթ։

Նախաավարտական պրակտիկայից գոհունակության գնահատումը համարվում է «Շրջանավարտի կողմից Քոլեջից բավարարվածության գնահատման» հարցման բաղկացուցիչներից մեկը: 2022-2023 ուս. տարվա շուրջ 122 շրջանավարտի վերոնշյալ հարցմանը մասնակցության արդյունքները ցույց են տալիս, որ նրանք մեծմասամբ դրական են գնահատել նախաավարտական պրակտիկայի որակը:

Գծ.14. «Նախաավարտական պրակտիկայի համար ընտրված կազմակերպության պրոֆիլը համապատասխանում էր մասնագիտական ուղղվածությանը» հարցին:



Գծ.15. «Նախաավարտական պրակտիկան զարգացրեց և ամփոփեց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները» հարցին:



Բացի նախաավարտական պրակտիկայի որակի գնահատումից «Շրջանավարտի կողմից Քոլեջից բավարարվածության գնահատման» հարցումը բովանդակել է նաև հարցեր՝ ուղղված ՄԿԾ համապարփակ գնահատմանը, այդ թվում՝ ստացած տեսական գիտելիքների, գործնական հմտությունների, մասնագիտական գործունեության համար օտար լեզվով հաղորդակցման:

Որպես հարցման ամփոփում, շրջանավարտները գնահատել են Քոլեջի գրանցած որակական առաջընթացը իրենց ուսումնառության ընթացքում:

Գծ.16. «Մասնագիտական գործունեության համար ստացել եմ համապատասխան տեսական գիտելիքներ»» հարցին:



Գծ. 17. «Մասնագիտական գործունեության համար ստացել եմ համապատասխան գործնական հմտություններ» հարցին:



Գծ.18. «Մասնագիտական գործունեության համար ունեմ անհրաժեշտ գիտելիքների պաշար օտար լեզվով հաղորդակցվելու» հարցին։



Գծ.19. «Իմ ուսումնառության ընթացքում Քոլեջն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և այլ ծառայությունների բնագավառներում» հարցի։



Որպես դասընթացի պլանավորման, իրականացման, գնահատման և վերանայման ամբողջական փաթեթ, պորտֆոլիոների զարգացումը թույլ է տալիս ապահովել որակյալ ՄԿԾ-ի հենքային բաղադրիչը։ Ստորև ներկայացված է 2022-2023 ուս. տարվա ամբիոնների և հանրակրթական ծրագրերի բաժնի պորտֆոլիոների մշտադիտարկման արդյունքների գնահատման աղյուսակները։ Գնահատումը իրականցվել է ստորև ներկայացված սանդղակի միջոցով։

1- Առկա չէ
2- Առկա է էական բացթողումներով
3- Առկա է բացթողումներով
4- Առկա է առաջնային բաղկացուցիչներով
5- Առկա է ամբողջությամբ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

ԱՌԱՐԿԱ/ՄՈԴՈՒԼ	ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ				
	1	2	3	4	5
Հայոց լեզու					✓
Հայ գրականություն					✓
Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ					✓
Ռուսաց լեզու					✓
Ֆիզկուլտուրա			✓		
Աշխարհագրություն				✓	
Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ				✓	
Ֆիզիկա					✓
Ինֆորմատիկա և ՏՀՏ			✓		
Օտար լեզու					✓
Հայոց պատմություն					✓
Հայկական հարցի պատմություն					✓
Քիմիա					✓
ՆԶՊ					✓
Քաղաքացիական պաշտ. և արտ. իրավիճակ. հիմնահարցեր					✓
Կենսաբանություն					✓
Հանրահաշիվ և մաթեմ. անալիզի տարրեր					✓
Երկրաչափություն					✓
Հասարակագիտություն					✓

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

	1	2	3	4	5
Հիմնական միջոցների հաշվառում					✓
Հաշվապահական հաշ. կազ. և վար. ընթացակարգեր					✓

Պաշարների հաշվառում					✓
Ոչ նյութական ակտիվների հաշվառում					✓
Հաշվապահ. հաշվառ. տեսություն					✓
Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում					✓
Դեբիտորների և կրեդիտորների հաշվառում					✓
Կառավարչական հաշվառում					✓
Սեփական կապիտալ:Եկամուտների և ծախսերի հաշվառում					✓
Ռիսկերը և ապահովագրությունը տրանսպորտում			✓		
Կառավարման/մենեջմենթի/ ընդհանուր կարողություններ					✓
Տնտեսագիտության հիմունքներ					✓
Մարքեթինգ/Շուկայագիտություն/					✓
Կիրառական տնտ. և գործ. հմտ.					✓
Կազմակերպության մարքեթինգային գործունեություն					✓
Մարքեթինգային հմտություններ					✓
Դեղագոր. մարքեթ. և մենեջմենթի հիմունքներ				✓	
Ձեռներեցություն					✓
Կառավարման գործունեության կազմակերպում				✓	
Հարկային օրեն. կիր. հաշվապ.			✓		
Դրամական միջոցների հաշվառում			✓		
Աուդիտի հիմունքներ		✓			
Իրավունքի հիմունքներ			✓		
Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ					✓

Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ					✓
Կազմակերպ. էկոնոմիկ.					✓
Կազմակերպ. և առ. ստորաբ. աշխատ. կազմ.					✓
Մասնագիտական հաղորդակցություն օտար լեզվով					✓
Հաղորդակցություն					✓
Հոգեբանության հիմունքներ					✓

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ԱՌԱՐԿԱ/ՄՈԴՈՒԼ	*ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ*				
	1	*2*	*3*	*4*	5
Ալգորիթմների տարբ.կիրառում					✓
Տեքստային և գործ. փաստ. մշ. ու ներկ.					✓
Տեղեկ. ապահովման տեխ. միջոցներ					✓
Միկրոպրոցեսորներ					✓
Կիրառ. հավելված. ստեղծ. միջոց.					✓
Օպերացիոն համակարգեր					✓
ԷՀՄ ճարտարապետություն					✓
Համակարգչային օպերատրություն					✓
Հանրահաշիվ և մաթ. անալիզի տ.		✓			
Գծային հանր. տարրերը և ֆուն. հավ.լուծ. մոտ		✓			
Երկրաչափություն		✓			
Դիսկրետ. Մաթեմատիկայի հիմունքներ		✓			
Դիսկրետ Մաթեմատիկայի կիրառությունները		✓			

Մաթեմ. անալիզի հիմ.		✓			
Անալիտիկ երկրաչափության տարրեր		✓			
Դիֆ. և ինտ. հաշ. կիր.		✓			
Հավան. տես. և մաթ. վիճակ.		✓			
Ծրագրավորման հիմունքներ					✓
Վեկտորային գրաֆիկա					✓
MCV ֆրեյմվորկ		✓			
WEB կայքի նախագծում					✓
Բաց կոդով ընդհ. նշ. սկր. ծր. լեզ. Կիր.		✓			
Գրաֆիկական ինտերֆ. ծրագրավորում					✓
Ջավասկրիպտի կիրառում		✓			
Հագուստի համ. նախ.ծր. և սարք.		✓			
Կայքի էջի դիզայնի արտ.WEB ինտերֆ.					✓
Ինտերպրետացվող սկ.լեզվի կիրառ.					✓
Տիպոգրաֆիկայի հիմունքներ					✓
Ծավալային, տոնային խնդիր. լուծումը գծանկ.					✓
Կոմպոզիցիոն օրին. կիր. գծանկ.					✓
Գծանկարչության հիմունքներ					✓
Դիզայնի պատմություն					✓
Գովազդային նյութերի մշակում					✓
Եռաչափ մեդելավորման տեխ.- 2d, 3d օբյեկտ. ստեղծում					✓
Եռաչափ մոդել. տեխ. մոդ. վիզուալ. /RENDER/					✓
Եռաչափ մոդ. տեխ.-ԱՆԻՄԱՑԻԱ					✓

Ճարտարագիտական և համակ. գր.					✓
Համակարգչային կետային գրաֆիկա					✓
Համակարգչային վեկտորային գրաֆիկա					✓
Համակարգչային գեղարվեստական նախագծում					✓
Էրգոնոմիկա և մոդելավորման սկզբունքներ					✓
Գունաբանության հիմունքներ					✓
Կետային գրաֆիկա					✓
Օբյեկտ կողմն. ծրագր. ներածություն					✓
Օբյեկտ կողմն. մոդելի կիրառում					✓
Դինամիկ վեբ կայքերի նախագծում					✓
Տեխ. առաջ. պայմ. վերջնարդյունք. փաստաթղթերի մշակում					✓
Ստատիկ վեբ կայքերի նախ.					✓
WEB կայքերի որոնողական համակարգերի առ միջոցների ստեղծում					✓
Լայն կլասս. գրադ. պլատ. ան. ծր. լեզվի					✓
Համակարգ. ցանց., սարք,ինֆ., պաշ. և հաս. համ. ցանց.		✓			
Ոչ ռելյացիոն տվյալն. բազաների նախագծում		✓			
Տեղեկատվության անվտանգության ապահովում		✓			
Ավտոտրանս. ձեռնարկության տնտեսագիտ.			✓		
Էլեկտրոնային աղյուսակներ					✓
Ռելյացիոն տվ. բազ. նախագծ.		✓			

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՄՈԴՈՒԼ	*ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ*				
	1	*2*	*3*	*4*	*5*
Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբան					✓
Ստոմատոլոգիական հիվանդություններ					✓
Տեխ. սարք. և նյութագիտություն				✓	
Սանիտարիայի և հիգիենիայի հիմունքներ					✓
Անվտանգություն և առաջին օգնություն					✓
Ամբողջաձույլ և պլաստմասսե կամրջաձև պրոթեզներ		✓			
Մասնակի թիթեղ. պրոթ. /III, IV, V բուժ./		✓			
Անատամ, լր. շարժ.թիթ. պրոթեզ/I և II բուժայց/		✓			
Կոմբինացված կամրջաձև պրոթեզներ		✓			
Շարժական թիթեղ. պր.վերանոր. և վերահենք.		✓			
Լիրվ շարժ. թիթ. պրոթ. /IV, V բուժ./		✓			
Կոմբինացված կամրջաձև պսակներ		✓			
Լիրվ շարժ. թիթ. պրոթ. /III բուժայց/		✓			
Կոմբինացված պսակներ		✓			
Բյուգելային պր., I բուժայց		✓			
Բյուգելային պրոթեզ, II բուժայց		✓			
Բյուգելային պրոթեզ, III, IV բուժայց		✓			
Անշարժ պրոթեզ., ներդ., ծայրատ. գամիկ. ներդիր					✓

Ամբողջաձույլ և պլաստմասսե պսակներ					✓
Կոմբինացված մոդել և մոմե թասակի ձուլում					✓
Դիմածն. պրոթեզ. պատր. տեխ.					✓
Կողմնային ատամ. մասն. անատ., կծվածք					✓
Ձուլման գործ					✓
Ատամնատեխ. նյութագիտութ.					✓
Անալիտիկ քիմիա					✓
Ատամների ընդ. անատ. ֆրոնտ. ատ. մաս. անատ.					✓
Դիմածնոտային պրոթեզների պատրաստման տեխնոլոգիա					✓
Օրթոդոնտիկ ապարատի պատրաստման տեխնիկա					✓
Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա					✓
Անվտանգություն և առաջին օգնություն		✓			
Ընդհանուր հիգիենա և էկոլոգիա		✓			
Ֆարմակագնոզիա		✓			
Ֆիզիոլոգիա՝ անատոմիայի հիմ.		✓			
Մանրէաբանության հիմունքներ		✓			
Բուսաբանության հիմունքներ					✓
Ընդհանուր դեղաբանություն					✓
Դեղերի դեղատնային տեխ.					✓
Դեղագ. կազմ.և էկոնոմիկա					✓
Դեղ. գործ. տեխ.					✓
Մասնավոր դեղաբանություն					✓
Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա					✓
Բժշկական և դեղագիտության ապրանքագիտություն					✓

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

	1	2	3	4	5
Եռակցում և զոդում		✓			
Օդափոխ. համակարգերի մոնտաժման հմտություններ		✓			
Սառնագենտային համակարգերի շահագործման հմտություններ		✓			
Օդափոխության և օդի լավոր. համ. շահագործ. հմտ.		✓			
Սառնագենտային, օդափոխ. և օդի լավ. համ. փորձ.		✓			
Միջպետական փոխադրումներ		✓			
Ավտոմոբիլ. ընդհանուր կառավարում		✓			
Տրանսպորտային միջ.շահագ. արգ. անս. ու պայմ.		✓			
Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգության ապահովում		✓			
Բեռնատար ավտոմոբ. փոխ.		✓			
Բեռնագիտություն		✓			
ՃԵԿ		✓			
Ավտոմոբիլային փոխ.կառավարում		✓			
Ավտոշահագ. նյութագ.		✓			
Տրանսպ. միջոց. տեխ. շահագործ.		✓			
Տրանսպ. միջոց. տեխ. շահագործ.		✓			
Սպասարկման որակի հս.		✓			
Ավտոմեքենայի անվտանգ վարման հմտություններ		✓			
Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ		✓			
Լոգիստիկայի հիմունքներ		✓			
Ավտոմոբ. տրան. փոխադրամիջոց		✓			

Ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներ		✓			
Ճարտարագիտական գրաֆիկա		✓			
Գծագրություն		✓			
Գազաեռակցմ. նյութ.		✓			
Թույլ., նստ.,չափիչ գոր. և չափ. տեխ.		✓			
Գազաեռ. համ. օգտ. սարք.շահ. և պատր.		✓			
Միասնական տրանսպորտային համակարգեր		✓			
Սառնագենտային համակ. նախագծման հմտ.		✓			
Օդափոխ. և օդի. լավ. համ. համակ. մոնտ. աշխ.		✓			
Մոնտաժային և նորոգ.աշխ. ծավ. հաշ., նախ. կազմ.		✓			
Աշխատանքի անվտանգ.		✓			
Ջեռ., օդափ., օդի լ. և սառ. համ. բաղ. մաս. դաս. և դր. տ. ուն. մ. թ., էլ. և մ. եր. հիմ.		✓			
Անհատ. սառնագ. համ. սար. մոն. հմ.		✓			
Բաց հերմետիկ և կիսահերմետիկ կոմպրես. վերան.		✓			
Սառնագենտային համակարգերի նորոգման հմտություններ		✓			
Սառնագենտային համակ. խողովակ. մոնտաժ. հմտ		✓			

ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

	1	2	3	4	5
.Հիգիենիայի և սննդի անվտանգ. ապահով.					✓

Խոհանոցային աշխատանքների նախապատրաստ.					✓
Խոհարարության պատմություն					✓
Խոհանոցային սարքավորումների շահագործում					✓
Մաշկային և վարակիչ հիվանդություններ		✓			
Մասնագիտական էթիկայի հիմունքներ		✓			
Նկարչական հմտություններ		✓			
Դեմքի մաշկի խնամքի ընթացակարգերի իրականացում		✓			
Դեկորատիվ կոս. և դիմահարդարման իրականացում		✓			
Մազահեռացման իրականացում	✓				
Դեմքի մերսման իրականացում				✓	
Գեղարվեստական կերպ. ստեղծում				✓	
Ձեռքերի և ոտքերի հարդարման իրականացում		✓			
Ձեռքերի և ոտք. մերսման իրական.		✓			
Հոնքերի շտկում և թարթիչների սերտաճեցման իրականացում		✓			
ՀՄՆՊՀ: Տղամ. վերարկու			✓		
ՀՄՆՊՀ: Տղամ. պիջակ և բաճկոն			✓		
Հագուստի ժամանակակից ոճեր			✓		
ՀՄՆՊՀ: Կանացի շրջազգեստ և բլուզ			✓		
ՀՄՆՊՀ: Կանացի վերարկու			✓		
ՀՄՆՊՀ: Կանացի ժակետ և բաճկոն			✓		
Հագուստի մոդ., նախագծ. և պատ. հմ.: Տաբատ.՝ կան. և տղ.			✓		
ՀՄՆՊՀ: Մանկական տաբատ		✓			
ՀՄՆՊՀ: Կանացի կիսաշրջազգեստ			✓		
ՀՄՆՊՀ: Տղամարդու վերնաշապիկ		✓			
Հագուստի նախագծման հմտություններ: Ներածություն			✓		

Հագուստի հիմ. գծ. կառուցման հմտություններ			✓		
Կերակրատ. պատր. և ձևավ.:Նախուտեստ					✓
Սննդամթերքի ջերմային մշակում					✓

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Քոլեջում վերջին տարիներին ուսանողների թվաքանակը կայուն է: Վերջին տարիներին դիմորդների թիվը գերազանցում է ընդունվողների թիվը, ինչը դրական է գնահատվում և հնարավորություն է տալիս Քոլեջին ընտրելու բարձր առաջադիմությամբ ուսանողներին:

Գծ. 20. Վերջին 5 տարիների դիմորդների քանակական վերլուծությունը, որը հարաբերակցվել է տվյալ ուսումնական տարվան հատկացված սահմանային տեղերին՝ արտահայտված տոկոսներով:



Գծ. 21. Վերջին 5 տարիների ուսանողների քանակական վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով:



Աղ.7. 2022-2023 ուս. տարվա ուսանողների կազմի վերաբերյալ:

N	Դասիչ	Մասնագիտություն	I* կուրս		I-II* կուրս		II-III* կուրս		III-IV* կուրս	
			անվ	վճ	անվ	վճ	անվ	վճ	անվ	վճ
Միջին մասնագիտական կրթություն										
1	0411.01.5	Հաշվապահական հաշվառում	11	15	15	10	10	14		
2	0613.01.5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	22	2	22	3	22	0	24	0
3	0613.02.5	Համակարգչային գեղարվեստական նախագծում	20	0	18	2	14	6		
4	0916.01.5	Դեղագործություն	1	19	0	23	1	22		
5	0911.01.5	Ատամնատեխնիկական գործ	1	21	0	21	0	24		
6.	1012.02.5	Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	14	10	20	4	14	9		
7	0212.02.5	Հագուստի մոդելավորում և նախագծում	17	0			15	0		
8	1041.01.5	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	24	0	24	1	24	3	25	0
9	0715.15.5	Սառնարանային տնտեսություն					19	0	11	0
	Ընդամենը		110	67	99	64	119	78	60	0
Նախնական մասնագիտական կրթություն										
1	1013.04.4	Խոհարարական գործ	24	0	17	6				
2	0715.03.4	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա			17	0				
	Ընդամենը		24	0	34	6				

Քոլեջը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթության որակն ու ուսանողների առաջադիմության ցուցանիշները: Միջին մասնագիտական 9-ամյա կրթությամբ սովորող բոլոր առաջին կուրսերի ուսանողները հանձնել են հանրակրթական բաղադրիչի պետական ավարտական քննություններ, իսկ ավարտական կուրսերի ուսանողները՝ պետական ամփոփիչ ստուգումներ: Քննությունների գնահատումը կատարվել է 20 միավորանոց սանդղակով: Կազմվել են արդյունքների վերաբերյալ հաշվետվություններն՝ ըստ կուրսերի:

Աղ.8. Հանրակրթական բաղադրիչի պետական ավարտական քննությունների գնահատման տվյալներն՝ ըստ մասնագիտությունների՝ արտահայտված տոսկոսով:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
	Հայոց լեզու և գրականություն	Հայոց պատմություն	Մաթեմատիկա
Հաշվապահական հաշվառում 26 ուսանող	Բավարար-30% Լավ-55% Գերազանց-15%	Բավարար-35% Լավ-6% Գերազանց-8%	Բավարար-30% Լավ-58% Գերազանց-8%

			(+1 հեռացված/չներկայացած)-4%
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրեր 23 ուսանող	Բավարար-48% Լավ-52%	Բավարար-65% Լավ-30% Գերազանց-5%	Բավարար-48% Լավ-39% Գերազանց-13%
Համակարգչային գեղարվեստական նախագծում 19 ուսանող	Բավարար-21% Լավ-74% Գերազանց-5%	Բավարար-42% Լավ-42% Գերազանց-5% (+2 հեռացված/չներկայացած)-7%	Բավարար-32% Լավ-63% Գերազանց-5%
Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ 24 ուսանող	Բավարար-75% Լավ-25%	Բավարար-79% Լավ-12% Գերազանց-4% (+1 հեռացված/չներկայացած)-5%	Բավարար-83% Լավ-17%
Հագուստի մոդելավորում և նախագծում 15 ուսանող	Բավարար-100%	Բավարար-93% Լավ-7%	Բավարար-87% Լավ-13%
Դեղագործություն 17 ուսանող	Բավարար-65% Լավ-35%	Բավարար-76% Լավ-23%	Բավարար-65% Լավ-29% (+1 հեռացված/չներկայացած)-6%
Ատամնատեխնիկական գործ 19 ուսանող	Բավարար-95% Լավ-5%	Բավարար-89% Լավ-5%% (+1 հեռացված/չներկայացած)-6%	Բավարար-89% Լավ-5% (+1 հեռացված/չներկայացած)-6%
Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում 22 ուսանող	Բավարար-81% Լավ-19%	Բավարար-95% (+1 հեռացված/չներկայացած)-5%	Բավարար-91% Լավ-9%
Խոհարարական գործ 22 ուսանող	Բավարար-72% Լավ-22% (+1 հեռացված/չներկայացած)-6%	Բավարար-86% (+3 հեռացված/չներկայացած)-14%	Բավարար-86% Լավ-5% (+2 հեռացված/չներկայացած)-9%
Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա 17 ուսանող	Բավարար-100%	Բավարար-82% Լավ-18%	Բավարար-94% (+1 հեռացված/չներկայացած)-6%

Աղ.9. Պետական ամփոփիչ ստուգումների գնահատման տվյալներն՝ ըստ մասնագիտությունների՝ արտահայտված տոսկոռով:

ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
	Գերազանց	Լավ	Բավարար
Ատամնատեխնիկական գործ	22%	9%	69%
Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	19%	81%	-
Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	25%	71%	4%
Հաշվապահական հաշվառում	50%	42%	8%
Համակարգչային գեղարվեստական նախագծում	33%	39%	28%
Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	41%	18%	41%
Դեղագործություն	30%	30%	40%
Սառնարանային տնտեսություն	14%	29%	57%

Հատկանշական է, որ ի համեմատ նախորդ տարվա տվյալների *(Հավելված 9),* 2022-2023 ուստարվա ցուցանիշները բավականին զիջում են: Նման պատկերը պայմանավորված է քննությունների անցկացման ընթացքում վերահսկման մակարդակի խիստ բարձրացմամբ, գնահատման ժամանակ ցանկացած տեսակի սուբյեկտիվ մոտեցման բացառմամբ և տոմսերի առավել մանրակրկիտ մշակմամբ: Քոլեջն ինքնանպատակ չի համարում ուսանողի բարձր գնահատումը և ձեռնարկում է ամեն միջոց, որպեսզի ցանկացած գնահատական լինի անաչառ, օբյեկտիվ և պատճառաբանված:

Քոլեջում Կարիերայի կենտրոնը մշտական կապ է պահպանում Արտաշատի զբաղվածության տարածքային կենտրոնի, գործատուների և կազմակերպությունների հետ: Շրջանավարտները տեղեկանում են թափուր աշխատատեղերի առկայության մասին պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում պարբերաբար հրապարակվող հայտարարությունների միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային անձնական նամակների միջոցով:

Գծ 22-ում պատկերված է վերջին հինգ տարիների շրջանավարտների քանակական վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով։



Վերջին 5 տարիներին շրջանավարտների զբաղվածության մակարդակը ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, որ շրջանավարտների հիմնական մասը շարունակում է կրթությունը ավարտելուց անմիջապես հետո, մնացած շրջանավարտների մեջ քանակապես գերազանցում են ոչ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտները, նրանց հաջորդում են գործազուրկները, և ամենաքիչ տոկոսն են կազմում նրանք, ովքեր աշխատում են իրենց մասնագիտությամբ։ Այս խնդրի լուծման համար Քոլեջը մեծ ջանքեր է գործադրում՝ փորձելով ընդլայնել գործատուների շրջանակը, բայց դա առայժմ լավ չի հաջողվում՝ գործատուների քիչ շահարգռված լինելու պատճառով։

Գծ.23. Վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածության քանակական վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով։



Ուսանողներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով Քոլեջն իր վճարովի ուսուցման համակազմի ուսանողների համար, հաշվի առնելով սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակիորեն փոխհատուցում է ուսման վարձավճարը:

Գծ .24.Վերջին 5 տարիներին Քոլեջի կողմից ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստացած ուսանողների քանակական վերլուծությունը՝ արտահայտված տոկոսներով:



Ողջ ուսումնական գործընթացի ընթացքում առանձին ենթագործընթացներ գնահատելու համար Քոլեջի ՈՆԱԿ-ը ձեռնամուխ է եղել ուսանողների շրջանում համապատասխան հարցումների անցկացման կազմակերպմանը:

Ելնելով հարցումների բնույթից և առանձնահատկություններից դրանց առավելագույնը մասնակցել են 422 ուսանող: Նման լայնամասշտաբ հարցումները թույլ են տվել թիրախավորել կոնկրետ խնդիրներ, գնահատել այս կամ այն գործընթացից ուսանողների բավարարվածությունը, հավաքագրել որոշ իրատեսական առաջարկություններ, որոնք հետագայում ներառվել են բարելավման մեխանիզմների առանձին բլոկների մեջ: Հարցումների համապարփակ վերլուծությունները կարելի է տեսնել Ներքին գնահատման առանձին չափանիշներում:

Պետք է նշել, որ ուսանողներն իրենց խնդիրների լուծման համար առաջնային օղակ են մշտապես համարել կուրսղեկներին՝ դրանով իսկ թուլացնելով կապը ուսանողական խորհրդի (այսուհետ՝ ՈԻԽ) և ուսանողների միջև: Վերջիններիս միջֆունկցիոնալ կապի առավելարկման, ինչպես նաև կուրսի ավագ-ՈԻԽ-վարչական պատասխանատուներ օղակի ամրապնդման նպատակով Քոլեջը որոշում կայացրեց հրաժարվել կուրսղեկների ինստիտուտից՝ համարելով, որ նշված հանգամանքը միայն դրականորեն կանդրադառնա կազմակերպվող աշխատանքների վրա և թույլ կտա խուսափել որոշակի ընթացիկ խնդիրներից:

Որպես ուսանողների ներկայացուցչական մարմին, ՈԻԽ-ն (կազմին կարելի է ծանոթանալ *Հավելված 3-ում*) ուս. տարվա ընթացքում կազմակերպել և/կամ աջակցել է բազմաշարք և տարաբնույթ միջոցառումների իրականացմանը:

Աղ. 10. 2022-2023 ուս. տարվա ընթացքում ՈՒԽ-ի կողմից կազմակերպած/աջակցված միջոցառումների ցանկ։

Միջոցառման բնույթ	Միջոցառում	Ժամկետահատված
Ճանաչողական/Իրազեկման	Ուսանողների իրավունքների պաշտպանություն (հայտարարություններ)	Սեպտեմբեր
	Բաց դռների օր	Ապրիլ
	Ուսանողի ձայնը արկղիկ	Տարվա ընթացքում
	Ու.Խ. անդամների ծանոթացում առաջին կուրսեցիների հետ	Սեպտեմբեր
Օնլայն հարթակներին վերաբերող	Մեդիա խմբի ստեղծում	Հոկտեմբեր
Երաժշտական	ԲԵՆԴ-ի (երաժշտական խմբի ստեղծում)	Հոկտեմբեր
Ազգային/Մշակութային	Ուսանողի տոն	Հոկտեմբեր
	Հիշատակի ցերեկույթ (40օրյա պատերազմին վերաբերվող)	Սեպտեմբեր
	Գրքի տոն	Փետրվար
	Տյառնընդառաջ/Վալենտին	Փետրվար
Սպորտային	Սպորտլանդիա (վոլեյբոլ)	Դեկտեմբեր-Ապրիլ
Ազատ ժամանց	Մաֆիա	Փետրվար
	Շրջանավարտների հրաժեշտի միջոցառում	Ապրիլ-մայիս
	Փոփոխությունների թատրոնի հյուրընկալում	Փետրվար
	Նոր ուսումնական տարվա սկիզբ	Սեպտեմբեր
Գիտական/ուսումնական	Շախմատի առաջնություն	Փետրվար
	Ուսանողների տարհանում	Մարտ
	Բանավեճ	Հունվար-Մարտ
Սոցիալական	Շաբաթօրյակ	Ապրիլ

ՈՒԽ աշխատանքների գնահատման և հետագայում դրանց կատարելագործման նպատակով, սահմանված կարգով, ՈՒԽ-ի կողմից՝ մայիսի 2-23-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է ՈՒԽ կատարած աշխատանքների արդյունավետության գնահատում ուսանողների շրջանում։ Մեկամսյա ժամկետում Քոլեջի ՈՆԱԿ հանձնաժողովում ընդգրկված ՈՒԽ անդամների կողմից իրականացվել է հարցման արդյունքների ամփոփ վերլուծություն։

Հարցումը անցկացվել է օնլայն ձևաչափով, որին մասնակցել են Քոլեջի ուսանողների 50 տոկոսից ավելին։ Հարցումները նպատակ ունեին բացահայտելու ՈՒԽ կազմավորման վերաբերյալ ուսանողների իրազեկվածության, ՈՒԽ կազմավորման թափանցիկության և արդարացիության ապահովման մակարդակները, ՈՒԽ-ի կողմից ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը, ՈՒԽ-ի կողմից ուսանողների կարիքների վերհանման աշխատանքների և մեխանիզմների արդյունավետությունը, ՈՒԽ-ի կողմից ուսանողության համար բարենպաստ

միջավայրի ձևավորման, ուսանողների գիտական, կրթական, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը:

Հարցմանը մասնակցել է 304 ուսանող:

Գծ. 25. ՈՒԽ աշխատանքներից բավարարվածության գնահատման հարցման ամփոփ վերլուծությունը:

1. ՈՒԽ-ի կազմավորման իրազեկումը իրականացվել է պատշաճ մակարդակով:



2. ՈՒԽ-ի կազմավորումը եղել է թափանցիկ և արդար:



3. ՈՒԽ-ն կարողացել է բարձրացնել ուսանողների իրավագիտակցության (սեփական իրավունքների և պարտականությունների ըստ հարկի տիրապետումը) մակարդակը:



4. ՈՒԽ-ն կարողացել է ապահովել կրթական ոլորտի խնդիրների վեր հանումը ուսանողների շրջանում։



5. ՈՒԽ-ն կարողացել է նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ուսանողների գիտական, կրթական, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը։



Ուսանողները մեծամասամբ գոհ են եղել ՈՒԽ կազմավորման իրազեկումից՝ համարելով, որ այն իրականացվել է պատշաճ մակարդակով։

Վերջին տարիներին, Քոլեջում առաջնային է դարձել նաև իրականացվելիք բոլոր գործընթացներում թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը։ Հարցումը թույլ տվեց պարզել, որ ուսանողները առավելապես բավարարված են եղել ՈՒԽ-ի կազմավորման թափանցիկությունից և արդարությունից։

Ուսանողների մոտ իրավագիտակցության մակարդակի բարձրացումը թույլ է տալիս ամրապնդել օրինականությունը Քոլեջում, պայքարել ապօրինությունների դեմ, որն իր հերթին բխում է Քոլեջի՝ որպես իրավունքի դաշտում գործող կազմակերպության, շահերից։ «ՈՒԽ-ն կարողացել է բարձրացնել ուսանողների իրավագիտակցության (սեփական իրավունքների և պարտականությունների ըստ հարկի տիրապետումը) մակարդակը» հարցին հարցմանը մասնակցած ուսանողների 58%-ից ավելին տվել է առավելագույն գնահատական։ Միևնույն ժամանակ, ՈՒԽ-ն գտնում է, որ այս ուղղությամբ դեռ կան անելիքներ և ցուցանիշը դեռևս գոհացուցիչ չէ։

Խնդիրների վեր հանումը և անհրաժեշտ բարելավումների մշակումը թույլ է տալիս արդյունավետ աշխատել ՊԻԳԲ շրջափուլով: Եվ հարցին արդյո՞ք ՈՒԽ-ն կարողացել է ապահովել կրթական ոլորտի խնդիրների վեր հանումը ուսանողների շրջանում, մեծամասամբ ստացվել է դրական արձագանք:

Հարցմանը մասնակցած ուսանողները արդարացիորեն բարձր են գնահատել ՈՒԽ-ի կողմից ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորման, ուսանողների գիտական, կրթական, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանն ուղղված միջոցառումներն ու ծրագրերը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Քոլեջի կողմից մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվող ճանաչողական այցերը: Վերջիններիս իրականացումը մտադրում է հանրությանը ծանոթացնել Քոլեջում գործող մասնագիտությունների ցանկին, ՄԿԾ վերջնարդյունքներին, նախընտրելի մասնագիտության նեղ առանձնահատկություններին:

2023թ. մայիսի 19-ին Քոլեջ էին այցելել Արատաշատ քաղաքի ավարտական դասարանների աշակերտները մասնագիտական կողմնորոշման նպատակով: Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված այցի շրջանակներում նրանց ներկայացվեցին ԱՏՊՔ-ի ընձեռած կրթական հնարավորություններն ու աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները:

Հարցմանը մասնակցել է 79 հոգի: Հարցումներն իրականացվել են անանուն՝ հարցումների անաչառությունը և օբյեկտիվությունը ապահովելու նպատակով:

Գծ. 26. Ճանաչողական այցից բավարարվածության հարցման ամփոփ վերլուծությունը:

1. Ստացա՞ք արդյոք Ձեզ հուզող հարցերի պատասխանները Կարիերայի կենտրոնի կողմից:



2. Ստացա՞ք արդյոք Ձեզ հուզող հարցերի պատասխանները Ձեր նախընտրած մասնագիտության առանձնահատկությունների վերաբերյալ:



Առաջին հարցի վերաբերյալ հարցումների արդյունքները վկայում են այն մասին ,որ հարցվողների առավել մեծամասնությունը՝ 66 հարցվող նշել էր, որ ճանաչողական այցի շրջանակներում Կարիերայի կենտրոնի կողմից ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները, 12 հարցվող նշել էր, որ մասամբ են ստացել իրենց հարցերի պատասխանները և միայն 1 հարցվող նշել էր, որ չէր ստացել իր հուզող հարցերի պատասխանները:

Ստացա՞ք արդյոք Ձեզ հուզող հարցերի պատասխանները Ձեր նախընտրած մասնագիտության առանձնահատկությունների վերաբերյալ հարցից 65 հարցվող նշել էր այո, 13-ը՝ նշել էին մասամբ էին, իսկ 1 հարցվող նշել էր, որ չէր ստացել իր նախնտրած մասնագիտության առանձնահատկությունների վերաբերյալ հարցերի պատասխանները:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ճանաչողական այցի խորը ուսումնասիրությունը թույլ տվեց հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է կիրառել մասնագիտական կողմնորոշման համալիր ծրագիր:
2. Մասնագիտության ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել դեռահասի հոգեֆիզիոլոգիական և անհատական առանձնահատկությունները, հասարակական պահանջները:

Քոլեջի ՈՆԱԿ-ի և Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի են ունեցել հարցումներ նաև առաջին կուրսեցիների շրջանում, որն ուղղված է եղել առավելապես Քոլեջի կարիերայի ռեսուրսների (ուսանողների) գրադարանի հավաքագրմանը/ ամբողջականացմանը և մատուցված օժանդակող ծառայությունների որակի գնահատմանը: Վերջինիս վերաբերյալ տվյալները ստորև ներկայացված են, իսկ ուսանողների գրադարանի հավաքագրման համար տվյալները ենթակա չեն հրապարակման, քանզի կրում են անձնական բնույթ: Հարցմանը մասնակցել է 194 ուսանող:

Գծ.27. «Առաջին կուրսի/նոր ընդունված ուսանողների հարցման ամփոփ վերլուծությունը»:

1. Ինչպե՞ս եք ընտրել ԱՏՊՔ-ն:



2. Ի՞նչու եք ընտրել Ձեր մասնագիտությունը:



3. Քոլեջ ընդունվելու համար պարապե՞լ եք կրկնուսույցի մոտ:



4. Ինչպե՞ս կգնահատեք Ձեզ՝ հետևյալ կարողությունների առումով։











5. Ձեր ուսման վարձը վճարելու են.



6. Ինչպե՞ս կգնահատեք ընդունող հանձնաժողովի աշխատանքը.



7. Արդյո՞ք ունեցաք որոշակի դժվարություններ Քոլեջում փաստաթղթերը ներկայացնելիս:



8. Արդյունավե՞տ եք գնահատում կուրսղեկի/կուրատորի աշխատանքը Ձեզ հետ։



Ինչպես եք ընտրել ԱՏՊՔ-Ն հարցին ուսանողների պատասխանների առավելագույն քանակը ստացել է ծնողների խորհրդով տարբերակը, իսկ ինչու՞ եք ընտրել Ձեր մասնագիտությունը հարցին ուսանողների մեծամասնությունը նշել է, որ սիրում է իր ընտրած մասնագիտությունը։

ՈՒսանողների 99%-ին գոհացրել է ընդունող հանձնաժողովի աշխատանքը, և նրանք նշել են, որ որևէ դժվարություն չեն ունեցել Քոլեջում փաստաթղթերը ներկայացնելիս։

Ուսանողների մեծամասնությունը նշել է, որ սովորում է պետպատվերի շրջանակում, իսկ ովքեր այդ շրջանակից դուրս են, ուսման վարձը վճարելու են իրենց ծնողների օգնությամբ՝ բացառությամբ մի քանի ուսանողների, ովքեր նշել են, որ իրենց ուսման վարձը փորձելու են ինքնուրույն վճարել։

Կարողությունների առումով պետք է հավելել, որ ուսանողների մոտ 80%-ը գտնում են, որ իրենք ունեն արտահայտվելու և ներկայանալու, մտքերի գրավոր շարադրման, տեղեկատվության մշակման և վերլուծության, թիմային աշխատանքի, թիմակիցներին առաջնորդելու և համակարգչային կարողություններ։ Այս ցուցանիշը բավականին գոհացնող է և Քոլեջը կփորձի առավելագույնս օգտագործել իր ուսանողների հնարավորություններն ու կարողությունները։

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

Քոլեջի առջև դրված կարևորագույն նպատակներից մեկը արդյունավետ և միասնական կադրային քաղաքականություն վարելն է: Այդ նպատակին հասնելու համար պլանավորվել են որոշակի քայլեր, որոնց արդյունքում լուծվել են դրանց առջև դրված խնդիրները:

Քոլեջում մշակված և ներդրված ՆԻԱ-ները և դրանց կենսունակությունն ապահովելու համար կիրառվող մեխանիզմների առկայությունը լուրջ նախադրյալներ են առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար: Քոլեջի հաստիքացուցակով սահմանված բոլոր հաստիքները զբաղեցված են համապատասխան մասնագետների կողմից, ինչն էլ ապահովում է սահմանված նպատակների իրականացումը:

Դասախոսական կազմի ընտրության ժամանակ Քոլեջն առաջնորդվում է նաև կրթական չափորոշիչներում նկարագրված դասավանդողներին ներկայացվող պահանջներով: Բացի կրթական չափորոշիչի պահանջներից, Քոլեջում մշակվել են մասնագիտական դասախոսի պաշտոնի անձնագրեր, որոնցում ամրագրված են կրթական ծրագրերում ընդգրկված դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները: Առկա են ընդհանուր պահանջներ, որոնք պարտադիր են բոլոր աշխատակիցների համար, և մասնագիտական պահանջներ, որոնք յուրաքանչյուր դասախոսի համար սահմանված են՝ ելնելով դասավանդվող մոդուլի կամ առարկայի վերջնարդյունքներից:

Քոլեջի կադրային ներուժը 2023թ-ի սեպտեմբերի դրությամբ ներառում է 81 աշխատակից, որոնցից 73-ը համարվում են հիմնական, իսկ 8-ը՝ համատեղությամբ աշխատողներ: Աշխատողների մեջ զգալի մաս են կազմում Քոլեջի շրջանավարտները՝ մոտ 10%: Շրջանավարտներին աշխատանքի ընդունելու քաղաքականությունը Քոլեջը համարում է իր տված կրթության նկատմամբ վստահության դրսևորում, որի արդյունքում Քոլեջի անձնակազմը համալրվել է տարածաշրջանի երիտասարդ, հեռանկարային կադրերով:

Ի համեմատ 2020թ.-ի վարչական անձնակազմի աշխատավարձը բարձրացել է միջինում 19%-ով, պրոֆեսորադասախոսական կազմինը՝ 3%-ով, իսկ ուսումնաօժանդակ կազմինը՝ 20%-ով:

Աղ.11 . Քոլեջի աշխատակազմի աշխատավարձի դինամիկան՝ ըստ վերջին 3 տարիների:

	2022թ	2021թ	2020թ
Վարչական անձնակազմ	330000	294500	267000
Պրոֆեսորադասախոսական կազմ	140000	138000	136000
Այլ (ուսումնակաօժանդակ կազմ)	165000	163000	132000

Դասախոսի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին 2022-2023 ուսումնական տարվա համար դիմել են թվով 5 թեկնածուներ, որոնցից 4-ը հաղթել են մրցույթը: Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Քոլեջը հրապարակում է «Կրթություն» շաբաթաթերթում և/կամ տեղական մամուլում, Քոլեջի պաշտոնական կայքէջերում: Մրցույթի ընթացքը ձայնագրվում է: Մրցույթի անցկացման համար պատասխանատու հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են առանձին մատյանում և պահպանվում են Քոլեջում: Մրցույթի արդյունքների վերաբերյալ որոշումը կայացվում է

հանձնաժողովի անդամների քվեարկությամբ: Արդյունքները հրապարակվում են ամփոփիչ արձանագրությամբ:

Քոլեջը դասախոսի համապարփակ գնահատման համար նախատեսում է ունենալ որոշ հենքային գործիքներ, այն է՝ դասալսումը, ուսանողների կողմից գնահատումը, մասնագիտական և առանցքային հմտությունների ուղղությամբ իրականացվող վերապատրաստումները, արտաքին շահակիցների կողմից դասախոսին գնահատման հասանելիությունը:

Գնահատումները հիմնականում ուղղված են դասավանդման գործընթացին, գնահատման մեթոդներին, դասախոս-ուսանող փոխհարաբերություններին, մանկավարժական մոտեցումներին, իսկ մասնագիտական որակների գնահատման համար Քոլեջը մշակում է համապատասխան կանոնակարգ, բացի դա՝ հանրակրթական ծրագրերի բաժնի դասախոսները հնարավորություն ունեն մասնակցելու կամավոր ատեստավորման գործընթացին և ՊԴ կազմից արդեն իսկ 6 դասախոս իրենց ցանկությունն են արտահայտել մասնակցելու քննությանը: Մասնագիտական որակների գնահատմանը զուգահեռ, այն թույլ կտա բարձրացնել գրավչությունը արտաքին շահակիցների շրջանում և խթանել աշխատանքի արտադրողականությունը դասախոսների շրջանում՝ սեփական կարողությունների գնահատման և դրան համապատասխան վարձրատրության միջոցով:

18.01-07.02/2023թ. ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան «Ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման» կանոնակարգի, Քոլեջի ուսանողության շրջանում կատարվել են օնլայն անանուն հարցումներ՝ ուղղված յուրաքանչյուր դասախոսի և նրա դասավանդման որակի արդյունավետության գնահատմանն ու բարելավմանը, ինչպես նաև դասավանդող անձնակազմի ներուժի զարգացմանը:

Հարցումն անցկացվել է օնլայն տարբերակով՝ ապահովելով յուրաքանչյուր մասնագիտական կուրսի ուսանողների առնվազն 75%-ի մասնակցությունը հունվարի 18-ից սկսած 15 աշխատանքային օրերի ընթացքում: Ընդհանուր ընտրանքը կազմել է 422 ուսանող:

Հարցումը բաղկացած է եղել 2 հիմնական մասից՝

- դասի ընթացքում դասախոսի ցուցաբերած վարքագծի արդյունավետության գնահատման,
- դասախոսի կողմից դասի անցկացման արդյունավետության գնահատման:

«Ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման» հարցման պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի 85%-ը հաղթահարել է «դասի ընթացքում դասախոսի ցուցաբերած վարքագծի արդյունավետության գնահատման» վերաբերյալ 80% բավարարվածության շեմը, որից 52%-ը՝ 80-90% միջակայքում, 18%-ը՝ 90-95% միջակայքում, 15%-ը՝ 95-100% միջակայքում (տե՛ս գծ.1):

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 87%-ը հաղթահարել է «դասախոսի կողմից դասի անցկացման արդյունավետության գնահատման» վերաբերյալ 80% բավարարվածության շեմը, որից 54%-ը 80-90% միջակայքում, 20%-ը՝ 90-95% միջակայքում, 13%-ը՝ 95-100% միջակայքում (տե՛ս. գծ.2):

Գծ.28. Դասախոսի գնահատման վերաբերյալ արդյունքների վերլուծության միջակայքային տվյալներ (422 պատասխան):



Գծ.29. Դասավանդման գնահատման վերաբերյալ արդյունքների վերլուծության միջակայքային տվյալներ (422 պատասխան):



Վերլուծությունների արդյունքում անցողիկ շեմը (80%) չհաղթահարած, ինչպես նաև հաղթահարած և միևնույն ժամանակ մասնագիտական ու անձնական որակների լավարկման նպատակով կոնկրետ առաջարկներ ստացած դասախոսների համար մշակվել են բարելավման անհրաժեշտ քայլեր, որոնք ներկայացվել են կոնկրետ պատասխանատուներին, սահմանվել են բարելավման ժամկետներ:

Յուրաքանչյուր բարելավման մեխանիզմ մշակվել և հիմնված է եղել ներքոնշյալ կետերի վրա.

Դասախոսի վերաբերյալ.
1.Առարկայի/մոդուլի նկատմամբ առաջացնում է հետաքրքրություն
2.Լսարանի հետ ստեղծում է անմիջական կապ
3.Նյութը ներկայացնում է պարզ և դյուրըմբռնելի
4.Նյութը ներկայացնում է տրամաբանական հաջորդականությամբ
5.Հարցերի և հարցադրումների ժամանակ մղում է ակտիվ քննարկումների
6.Դասի կարգապահությունը անհրաժեշտ մակարդակի վրա է
7.Անհատական աշխատում է ուսանողի հետ (խորհրդատվություն, լրացուցիչ քննարկումներ)
8.Ունակ է ուղղելու ուսանողի ոչ պատշաճ վարքագիծը՝ առանց կոնֆլիկտային իրավիճակ ստեղծելու
9.Պահպանում է էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները
10.Ապահովում է ակադեմիական ազնվության նորմերը

Դասավանդման վերաբերյալ.
1. Դասընթացը վարում է հետաքրքիր և մատչելի
2. Օգտագործում է դիտակտիկ միջոցներ (տեխնիկական, ցուցադրական)
3. Դասընթացի նյութերը ներկայացնում է բավարար ծավալով, բարդ հատվածները բացատրում է
4. Տրամադրվող տեղեկատվությունը արդիական է և ուսուցողական
5. Հանձնարարությունները օգտակար են և կիրառելի
6. Խրախուսում է ուսանողի ակտիվությունը դասի ժամանակ
7. Համբերատար է նյութը դժվար յուրացնող ուսանողների հանդեպ
8. Դասաժամը արդյունավետորեն է բաշխում
9. Հարցադրումների բովանդակությունը համապատասխանում է ուսումնական նյութերին
10. Ուսանողների գիտելիքները գնահատելիս ցուցաբերում է արդարություն

Չխախտելով էթիկական վարվեցողության նորմերը և պահպանելով կոնֆիդենցիալությունը վերլուծության մեջ նշված չեն պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների անունները, յուրաքանչյուրի տոկոսային գնահատականը և բարելավման մեխանիզմները:

Առանձին հարցումներ են կատարվել նաև շրջանավարտների շրջանում, ովքեր առանձին դասախոսներին գնահատելուց զատ, մասնակցել են նաև «Շրջանավարտի կողմից քոլեջից բավարարվածության գնահատման» հարցմանը, որտեղ հարցերից մեկը ուղղակիորեն կապված է եղել ՊԴ կազմի գնահատման հետ:

Գծ. 30. «Պրոֆեսիոնալ-դասախոսական կազմն ունի համապատասխան գիտելիքներ, հմտություններ առարկաների/մոդուլների դասավանդման համար» հարցին շրջանավարտների պատասխանը /122 ուսանող/:



Քոլեջը մեծ թափով զարկ է տվել տարաբնույթ վերապատրաստումների ծրագրերին, որոնք առավել ակնառու կլինեն և կամփոփվեն հաջորդ ուսումնական տարում: Մասնավորապես՝ «21-րդ հմտություններ, նախագծային ուսուցում» և «Հետազոտական աշխատանքների կազմակերպումը ուսումնական գործընթացում» վերապատրաստումներին մասնակցությունը թույլ կտան զարգացնելու և ամրապնդելու ՊԴ կազմի մոտ հետազոտահեն մշակույթը և նորարարական մտածողությունը:

Բացի ՊԴ կազմի վերապատրաստումներից, Քոլեջը նախաձեռնում է և միջնորդում իր վարչատնտեսական անձնակազմի անդամների վերապատրաստումները: Վերջիններս թույլ են տալիս առավել արդյունավետորեն կազմակերպելու կառավարման գործընթացները, լավորակելու աշխատատեղին առաջադրված պահանջները և ամրապնդելու միջֆունկցիոնալ ստորաբաժանումների միջև առկա կապերը:

Աղ.12. 2022-2023 ուս. տարվա ընթացքում իրականացված վերապատրաստումների ցանկ:

	Անուն ազգանուն	Վերապատրաստում	Ամսաթիվ
1	36 աշխատակից	/MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Exel, Power-Point/ գիտելիքներն ու հմտությունների զարգացում	Սեպտեմբերի 1,2
2	Միսակյան Հարություն	Մասնակցելու արդյունաբերության աշխատողների 3-րդ համագումարի աշխատանքներին	Սեպտեմբերի 30
3	Զաքարյան Աննա	Մասնակցելու արդյունաբերության աշխատողների 3-րդ համագումարի աշխատանքներին	Սեպտեմբերի 30
4	Հակոբյան Սիրարփի	«Գնումների համակարգողների 2022 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների վերաբերյալ» թեմայով դասընթաց	Հոկտեմբերի 4,5
5	Սարգսյան Հրանուշ	Կարիերայի ուղղորդման մասնագետների մասնագիտական գիտելիքների ամրապնդում և կարողությունների զարգացում	Նոյեմբերի 22,23
6	1.Հովհաննիսյան Սիրանուշ 2.Տերտերյան Ռուբինա 3.Սարգսյան Հրանուշ 4.Խաչատրյան Գրետա 5.Հովհաննիսյան Դավիթ 6.Կարապետյան Սեյրան 7.Աղաջանյան Լուիզա 8.Արզումանյան Օֆելյա	ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներ	Մարտի 21-23
7	Արզումանյան Օֆելյա	Արհեստական կազմակերպությունների երիտասարդ ակտիվիստների համար արտագնա սեմինար պարապմունքներ	Ապրիլի 14-16
8	Դավթյան Արթուր	Արթուր Դավթյանին Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից «Նախագծի մշակում» թեմայով Հայաստանի ագրարային համալսարանում կազմակերպվող վերապատրաստում	Ապրիլ 26
9	Հակոբյան Ազատ	«Ինդուստրիալ Գլոբալ Յունիոն» միջազգային արհմիության հետ համատեղ սեմինար պարապմունքներ	Ապրիլի 26-28
10	Դավթյան Արթուր	ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ Էրազմուս+ ծրագրի 2022 թվականի մրցույթում հաղթած Հայաստանյան նախագծերի ազգային մեկնարկային օրեր	Մայիս 31
11	Մեջլումյան Մարինե	ՄԿՈՒԶԱԿ-Ի կողմից կազմակերպվող վերապատրաստում	Հունիս 13-15

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2022թ.- ից ի վեր Քոլեջը որոշակի մեխանիզմներ է մշակել հետազոտահեն մշակույթը զարկ տալու համար: ԱՏՊՔ-ն գիտակցում է հետազոտական աշխատանքների կարևությունը ուսումնական գործընթացքում և սկսել է ապահովել հենքային բաղադրիչներն ու դրանց փոխներգործող կապերը, որոնք անհրաժեշտ են «Հետազոտությունը» հիմնարար արժեք դարձնելու համար:

Այսպես՝ 2022-2023 ուս. տարում վերանայվել է «Ռեֆերատների կազմակերպման, իրականացման և գնահատման» ընթացակարգը: ԱՏՊՔ-ն գտնում է, որ հետազոտական աշխատանքների կատարման համար ուսանողը նախ պետք է կարողանա աշխատել տեղեկատվության հետ, մշակի այն, վերաձևակերպի անհրաժեշտության դեպքում և ի վերջո կարողանա գալ որոշակի եզրահանգումների:

Որպես հետազոտական աշխատանքների 2-րդ փուլ՝ հանդես են գալիս կուրսային աշխատանքները, որի դեպքում ուսանողը ոչ միայն մշակում է տեղեկատվությունը, այլ նաև իր կողմից ընտրված թեմայի շրջանակում կարողանում է որոշակի հետազոտություն կատարել: Եթե հետազոտության ընթացքում վեր է հանել որոշակի խնդիրներ, ապա պետք է առաջադրի նաև այդ խնդիրների համար լուծումներ և ներկայացնի առաջարկություններ:

Հետազոտական աշխատանքների վերջին փուլը դիպլոմային աշխատանքն է: Գործող ՄԿԾ-ներից դեռևս 2-ն՝ ըստ ուսումնական պլանների, ունեն դիպլոմային աշխատանք («Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում»: ԱՏՊՔ-ն պլանավորում է վերանայել ՄԿԾ-ների ուսումնական պլանները՝ դիպլոմային աշխատանքների կազմակերպմանն ուղղված:

2021թ.-ից ուսանողներին հանձնարարվում է կատարել կուրսային աշխատանքներ: 2021-2022 ուստարում Քոլեջում կուրսային աշխատանքներ են իրականացվել միայն «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ներով, իսկ 2022-2023 ուստարում կուրսային աշխատանքներ են իրականացվել գրեթե բոլոր ավարտական կուրսերում:

Ի համեմատ նախորդ ուս. տարվա, ուսանողները 2022-2023 ուս. տարվա կուրսային աշխատանքների արդյունավետությունը գնահատել են զգալիորեն բարձր: Այսպես, 2021-2022 ուս. տարվա կուրսային աշխատանքներից ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքները կազմել են միջինում 47% (հարցմանը մասնակցել է 65 ուսանող), իսկ 2022-2023 ուս. տարվա դեպքում՝ միջինում 83% (հարցմանը մասնակցել է 112 ուսանող):

Այս ուղղությամբ գործող ամբիոնները ձեռնարկել են բազմաթիվ միջոցառումներ՝ նախ համատեղ քննարկումների արդյունքում առաջադրվել են արդիական թեմաներ, կուրսային աշխատանքների ղեկավարները հետևողական են եղել ուսանողների ընթացիկ աշխատանքներին, թվով 7 ուսանողներ իրենց հետազոտությունները անց են կացրել տարաբնույթ պետական և մասնավոր հաստատություններում:

Կուրսային աշխատանքներից ուսանողների բավարարվածության գնահատման համար ՈՆԱԿ-ի կողմից կազմակերպվել են համապատասխան հարցումներ: Հարցման անցկացումն ապահովել են ուսումնական մասի վարիչները 2022թ. դեկտեմբերի 19-30 ընկած ժամանակահատվածում՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում

տրանսպորտում» մասնագիտության III - IV կուրսի ուսանողների համար և 2023թ մայիսի 18-31 ընկած ժամանակահատվածում մնացած կուրսային աշխատանքներ ներկայացրած մասնագիտական կուրսերի ուսանողների համար:

Անցկացված հարցմանը մասնակցել են թվով 112 ուսանողներ, ովքեր պնդումներից յուրաքանչյուրը գնահատել են 1-5 միավորանի սանդղակով:

Հարցումն իրականցվել է 5 ամբիոններում:



Գծ. 31. Կուրսային աշխատանքներից բավարարվածության գնահատման հարցման ամփոփ վերլուծությունը:

1. «Կուրսային աշխատանքների կազմակերպման գործընթացի իրազեկումն իրականացվել է պատշաճ մակարդակով» հարցին



2. «Կուրսային աշխատանքների թեմաներն արդիական էին» հարցին



3. «Քոլեջը տրամադրել է համապատասխան աջակցություն/ խորհրդատվություն կուրսային աշխատանքի կատարման համար» հարցին



4. «Կուրսային աշխատանքը օգնեց մասնագիտական և բազմակողմ զարգացմանը, հետազոտական կարողությունների ամրապնդմանը» հարցին



5. «Կուրսային աշխատանքի գնահատումն իրականացվեց օբյեկտիվ հիմքերի վրա՝ պահպանելով գնահատման չափանիշները» հարցին



Ուսանողները հիմնականում դրական են արձագանքել հարցման ընթացքում առաջադրված հարցերին։

«Կուրսային աշխատանքների կազմակերպման գործընթացի իրազեկումն իրականացվել է պատշաճ մակարդակով» հարցին ուսանողների 74% գնահատել է «Համաձայն եմ» և «Մասամբ եմ համաձայն», որը փաստում է ամբիոնների հավուր պատշաճի կատարած աշխատանքի մասին՝ միտված ուսանողների շրջանում կուրսային աշխատանքների կազմակերպման գործընթացի իրազեկվածության բարձրացմանը։

Կուրսային աշխատանքների թեմաների արդիականության վերաբերյալ հարցին ուսանողների 76% գտել է, որ թեմաները համապատասխանել են ժամանակակից կրթարժեքների միտումներին, հետևաբար ստացված գիտելիքները կկարողանան կիրառել հետագայում իրենց մասնագիտական գործունեության մեջ։

«Քոլեջը տրամադրել է համապատասխան աջակցություն/խորհրդատվություն կուրսային աշխատանքի կատարման համար» հարցին ուսանողների 65% նշել է իր գոհունակությունը։ Չնայած այս հանգամանքին, քոլեջը գտնում է, որ այս ուղղությամբ կան որոշակի անելիքներ՝ մասնավորապես ուսանողներից մեկը առաջարկել է, որպեսզի քոլեջի միջնորդությամբ հնարավոր լինի ուսումնասիրություններ կատարել տարբեր ոլորտային կազմակերպություններում (արտադրական, առևտրային) կուրսային՝ աշխատանքներում հետազոտական բաղադրիչի ապահովման նպատակով։

Հետազոտական կարողությունների ամրապնդման վերաբերյալ հարցին ուսանողների 72% դրական է պատասխանել։ Հետազոտությունների իրականացումը թույլ է տալիս ուսանողին ամրապնդել և զարգացնել իր մասնագիտական կարողությունները և հմտությունները, ինչպես նաև տեսական գիտելիքները կիրառել գործնականում։

Կուրսային աշխատանքները գնահատվում են համապատասխան կանոնակարգի ձևաչափի, որում առանձին բաղադրիչների գնահատման միջոցով ձևավորվում է վերջնական գնահատականը։ Ուսանողների 71% կարծում է, որ իր ստացած գնահատականը եղել է օբյեկտիվ հիմքերի վրա և համապատասխանել է նշված ձևաչափին։

Հետազոտահեն մշակույթի կայացման համար անհրաժեշտ է որպեսզի ՊԴ կազմն ամբողջությամբ և ներդաշնակ ընկալի հետազոտական աշխատանքների կայացման անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են միջոցառումներ, որոնք ի մի կբերվեն 2023թ. ավարտին:

Հետազոտահեն մշակույթի ներդրման ուղղությամբ որոշ գործուն քայլեր են ձեռնարկվել նաև Քոլեջի Կարիերայի կենտրոնի կողմից, որն իր կողմից կազմակերպվելիք ոչ ֆորմալ դասընթացների շրջանում իրականացրել է 4 միջոցառում:

Աղ. 13. Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումներն՝ ուղղված ուսանողների մոտ քննադատա-վերլուծական մտածողության զարգացմանը:

N	Միջոցառման անվանում	Արդյունավետությունը	Վերջնական արդյունքը
1	Թեմա1 Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՈ)վերլուծություն	Սեփական անձի ինքնագնահատման ձևերի, հնարավորությունների, ուժեղ և թույլ կողմերի և դրանցից բխող հնարավորությունների ու ռիսկերի գնահատում և վերլուծություն	Ինքնագնահատումը հնարավորություն տվեց անդրադառնալու և վերլուծելու սեփական անձը՝ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորություններն ու ռիսկերը, որոնք նպաստում են անձի ինքնազարգացմանը
2	Թեմա 2 Քննադատական և ստեղծագործական մտածողություն	ՈՒսանողների մոտ զարգացնել քննադատաբար, ստեղծագործաբար մտածելու կարողություն	Դասընթացը նպաստեց ուսանողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, որն ընդգծեց դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը
3	Թեմա 3 Ինչպես կազմել մրցունակ աշխատանքային ինքնակենսագրական	Նպաստել աշխատանքային կենսագրական կազմելու հմտությունների զարգացմանը	Դասընթացը հնարավորություն ընձեռեց ուսանողներին կազմելու աշխատանքային կենսագրական, որի նպատակն է հնարավորինս լավ ներկայացնել իրենց ուժեղ կողմերը՝ քողարկելով թույլ կողմերը
4	Խաղ-Բանավեճ	Որևիցե կոնկրետ խնդրի լուծում գտնել և երրորդ կողմին համոզել: Դրան զուգահեռ ձևավորել քննադատական մտածողություն, հետազոտելու, եզրահանգումներ անելու և լսելու ունակություններ	Զարգացրեցին քննադատական մտածողությունը, իրերին, երևույթներին նայեցին տարբեր տեսանկյուններից, ներկայացրեցին և պաշտպանեցին սեփական տեսակետը, քննարկեցին ընդդիմախոսի փաստարկները

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԱՏՊՔ-ն գործում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, որտեղ ապահովված է տրանսպորտային միջոցների հասանելիությունը: Քոլեջն ունի 1 ուսումնական մանաշենք՝ 21256 քմ. ընդհանուր մակերեսով և 1 արհեստանոցային տարածք՝ 21095 քմ. ընդհանուր մակերեսով:

Քոլեջն ունի 28 լսարան (ներառյալ առարկայականները), միջոցառումների կազմակերպման համար 2 դահլիճ (մեծ և փոքր), մարզադահլիճ և սպորտդահլիճ (հանդերձարաններով), հարակից սենյակներում տեղակայված է գրադարանը և արխիվը:

Աղ. 14. Քոլեջի մասնաշենքերի կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների և լսարանների բաշխվածությունը:

100	Սպորտ դահլիճ	162
101	Մարզասրահ	34.72
102	Հանդերձարան	19.97
103	Հանդերձարան	19.97
104	Լսարան	18.6
105	Լսարան	18.6
106	Արխիվ	10.4
107	Գրադարան	27.6
108	Լսարան	39
109	Լսարան	36
110	Ուսումնական մաս	16.2
111	Ուսուցչանոց	33
112	Համակարգչային լաբորատորիա	48.6
113	Ֆիզիկայի լաբորատորիա	30
114	Նյութագիտության լաբորատորիա	51
115	Առաջին բուժ. օգն. կաբինետ	
201	ՆԶՊ կաբինետ	30
202	Լսարան	30
203	Հաշվապահություն, կադրերի բաժին	15.6
204	Կարիերայի կենտրոն, ՈՆԱԿ, պրակտիկայի բաժին	15.6
205	Տնօրեն, ընդունարան	63.3
206	Տնօրենի օգնական	17.4
207	Հաշվապահական հաշվառման կաբինետ	48
208	Հարակրթ. ծր. բաժին, ամբիոն	18
209	Համակարգչային լաբորատորիա	48
210	Ամբիոն	15.6
211	Լսարան	31.8
212	Օտար լեզուների կաբինետ	36
300	Կերամիկական աշխատանքների լաբորատորիա	6
301	Անօրգանական քիմիայի լաբորատորիա	37.12
302	Անատոմիայի լաբորատորիա	38.4
306	Ատամնատեխնիկական գործի լաբորատորիա	17.28
304	Լսարան	33

305	Գիպսավորման լաբորատորիա	18
303	Լսարան	51
307	Ամբիոն	14
401	Փայտամշակման արհեստանոց	105.65
402	Լսարան	19.8
403	Ամբիոն, փոխտնօրեն	19.15
404	Կարի արտադրության արհեստանոց	75.65
405	Լսարան	22.1
406	Վարս. և դիմահարդ. լաբորատորիա	54
407	Եռակցման աշխ. արհեստանոց	50
408	Ավտովերանորոգ. փականագործ. և ավտոկառուցվածքի լաբորատորիա	165.2
409	Սառն. մոնտաժ. և նորոգ. լաբորատորիա	34.6
213	Դահլիճ	154.8
214	Նիստերի դահլիճ	106.25
215	Խոհանոցային սարքավորումների կաբինետ	51

Քոլեջն ունի 2 համակարգչային լսարան, որոնցից 1-ում առկա է «Smart» գրատախտակ, ուսուցչանոց, բուժկետ, նախնական զինվորական պատրաստության, հաշվապահական հաշվառման, տեխնիկական տեխնոլոգիաների և ծրագրավորման, լեզուների կաբինետներ, վարչական անձնակազմի համար նախատեսված առանձնասենյակներ, որոնք պատշաճ կահավորված են: Քոլեջում առկա են անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված անօրգանական քիմիայի, անատոմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, խոհարարական լաբորատորիա: Արհեստանոցային բլոկում են տեղակայված փայտամշակման, եռակցման աշխատանքների, ավտովերանորոգման և փականագործական արհեստանոցները, ավտոկառուցվածքի, սառնարանների մոնտաժման և նորոգման, կարի արտադրության, վարսահարդարման և դիմահարդարման լսարան-լաբորատորիաները, ատամնատեխնիկական լաբորատորիան, լսարանը՝ կից գիպսանոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ՝ Քոլեջի հիմնական ուսումնական շենքը և գործածվող օժանդակ կառույցները (արհեստանոցներ, մասնագիտական լսարան-լաբորատորիաներ) պատշաճ կահավորում ունեն և գտնվում են բարվոք վիճակում:

Քոլեջն ունի 59 համակարգիչ, որոնցից 10-ը ձեռք է բերվել վերջին 2 տարվա ընթացքում՝ Քոլեջի բյուջեի հաշվին, մնացած համակարգիչները ֆիզիկապես մաշված են, մեծ մասը օգտագործվում է վերանորոգման արդյունքում: Քոլեջում առկա են դյուրակիր համակարգիչներ և պրոյեկտորներ, որոնք տեղաշարժվում են դասասենյակից դասասենյակ՝ ելնելով համապատասխան դասի պահանջներից:

Քոլեջը ՀՀ ԿԳՄՄՆ-ից ստացել է 8 համակարգիչ, 2-ն էլ՝ ձեռք է բերել իր միջոցներով: Համակարգչային ռեսուրսների պակասը Քոլեջը կարողանում է լրացնել նաև համագործակցելով ուսանողների հետ (դասապրոցեսին նրանք բերում են իրենց համակարգիչներն ու դասերը կազմակերպվում են նաև դրանց միջոցով):

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Խոհարարական գործ» ՄԿԾ-ների

դասասենյակ-արհեստանոցներն ու լաբորատորիաները բարվոք վիճակում են, ունեն տեխնիկական հագեցվածություն, ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով, պահպանված են անվտանգության նորմերը: Վերոնշյալ մասնագիտություններում գործնական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ ուսումնական նյութերն ամբողջությամբ տրամադրվում է Քոլեջի կողմից:

Քոլեջի բուժկետը ապահովված է սանիտարահիգիենիկ պայմաններով և առաջին օգնության դեղորայքով, առկա է բուժքրոջ պաշտոնի նկարագիր և վարվում է գրանցամատյան:

Շենքում տեղակայված սպորտդահլիճը և մարզադահլիճը կահավորված են համապատասխան մարզագույքով և ունեն հանդերձարաններ: Քոլեջում գործող գրադարանը այնքան էլ մեծ չէ, սակայն առկա գրականության անվանացանկը մուտքագրված է համակարգչում և աշխատանքներ են տարվում առկա մասնագիտական և գեղարվեստական գրքերի թվայնացման ուղղությամբ (Քոլեջի կայքէջում առկա է թվային գրադարան, որը բաղկացած է երեք բաժիններից՝ մասնագիտական գրականություն, գեղարվեստական գրականություն և առարկայական գրականություն):

ԱՏՊՔ-ն պրակտիկաների կազմակերպման համար իրականացնում է ծախսեր, համար մասնավորաբար՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» ՄԿԾ-ի նախաավարտական պրակտիկան պատշաճ իրականացնելու համար վճարում է կատարել ԱՁ-ին (150.000 դրամ), որպեսզի ուսանողները պրակտիկայի ընթացքում հնարավորություն ստանան օգտվել այնտեղ առկա նյութատեխնիկական բազայից: Քոլեջն ամբիոնների կողմից տրամադրված պահանջագրերի հիման վրա առանձնացնում է նաև լաբորատոր ուսումնական նյութերի, մասնագիտական սարքավորումների և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսերը, որոնք օժանդակում են գործնական պարապմունքների իրականացմանը:

Քոլեջում փաստաթղթաշրջանառությունը կառավարվում է «Գործավարության» կանոնակարգով: ԱՏՊՔ-ն ձեռք է բերել «ՀԾ հանրային հատված», «TAXSERVICE», «CLIENTTREASURY» համակարգչային ծրագրերը: Քոլեջը համագործակցում է ԿՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ, միացել է դասագրքերի ընդունում, հանձնում, բաշխում ընթացքը կանոնակարգող ԴՇՀ ծրագրին: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից և այլ շահակիցներից փաստաթղթերի հոսքը ապահովում է Mulberry համակարգի և ԱՏՊՔ-ի էլեկտրոնային փոստի միջոցով: Ներքին փաստաթղթշրջանառությանը նպաստում է այն հանգամանքը, որ աշխատակազմը ապահովված է համապատասխան տեխնիկայով և ինտերնետային կապով: Քոլեջում գործում է նաև արխիվային ստորաբաժանում, որը կատարում է փաստաթղթերի առանձին տեսակների արխիվացում:

Քոլեջի տարածքը ցանկապատված է, տեղադրված տեսախցիկների միջոցով իրականացվում է վերահսկողություն միջանցքներում և բակային տարածքում: Առկա է ՔՊ շտաբի պետի պաշտոնի նկարագիր և ՔՊ շտաբի հանձնաժողովի և խմբերի ցուցակ: Քոլեջի մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, կրակմարիչներ և տեսանելի վայրերում փակցված են մասնաշենքից տարհանման սխեմաներ:

ԱՏՊՔ-ում ՆԶՊ առարկայի ուսումնառության համար առկա են 2 ուսումնական զինատեսակ, որոնք պահպանվում են հատուկ անվտանգության համակազով ապահովված դասասենյակում առանձնացված խցում:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ Քոլեջում չկան, չկան նաև համապատասխան պայմաններ: Շենքը հարմարեցված չէ հենաշարժային խնդիրներ ունեցողների համար: Վերջինս Քոլեջի համար համարվում է ռազմավարական նպատակ, որը ֆինանսական միջոցների անբավարարվածության պատճառով դեռևս կյանքի չի կոչվել: ԱՏՊՔ-ն այս նպատակը պլանավորում է տեղափոխել հաջորդ ռազմավարական ծրագիր:

ԱՏՊՔ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են՝ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները, Քոլեջում կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները, ինչպես նաև «Ուսանողի ձայնը» առաջարկությունների արկղի պարունակության վերլուծությունը:

2022-2023 ուստարում «Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից ուսանողների բավարարվածության գնահատման» հարցման պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ ենթակառուցվածքային պայմանները հիմնականում հատել են 80% բավարարվածության շեմը՝ բացառությամբ համակարգչային լսարանների, որի հիմնային պատճառը եղել է համակարգիչներով ոչ լիարժեք հագեցվածությունը, ինտերնետ կապի, որի հետ կապված խնդիրները մեծ մասամբ ստացել են իրենց լուծումները և սանհանգույցների:

Գծ.32. Ենթակառուցվածքային պայմանների վերաբերյալ ուսանողների հարցման պատասխանները /422 պատասխան/:



Շեմը չհաղթահարած ենթակառուցվածքային պայմանների համար մշակվել են բարելավման մեխանիզմներ, որոնք պահանջում են համապատասխան ֆինանսական միջոցներ և համեմատաբար երկարաժամկետ լուծումներ: Կոնֆիդենցիալության պահպանման համար վերլուծության մեջ դրանք չեն մանրամասվում:

Ինչ վերաբերում է «Քոլեջի ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատակիցների բավարարվածության գնահատման» հարցման պատասխաններին, դրանց համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ ենթակառուցվածքային պայմանները հիմնականում հատել են 80% բավարարվածության շեմը՝ բացառությամբ լաբորատոր պայմանների, որի հիմնային պատճառը եղել է համակարգչային լաբորատորիաների ոչ լիարժեք հագեցվածությունը և ինտերնետ կապը, որի հետ կապված խնդիրները մեծ մասամբ ստացել են իրենց լուծումները:

Շեմը չհաղթահարած ենթակառուցվածքային պայմանների համար մշակվել են բարելավման մեխանիզմներ, որոնք պահանջում են համապատասխան ֆինանսական միջոցներ և համեմատաբար երկարաժամկետ լուծումներ: Կոնֆիդենցիալության պահպանման համար վերլուծության մեջ դրանք չեն մանրամասվում:

Գծ.33. Ենթակառուցվածքային պայմանների վերաբերյալ աշխատակիցների հարցման պատասխանները /55 պատասխան/:



Պետք է նշել, որ Քոլեջն իր աշխատակիցների և ուսանողների անվտանգության ապահովման համար խստորեն հետևում է անվտանգության նորմերի պահպանմանը: Ուսումնական մասնաշենքում և արհեստանոցային տարածքում պատերին փակցված են տարհանման սխեմաները (*Հավելված 8*):

Քոլեջի Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի մարտի 1-ին իրականացվում են արհեստական տարհանման աշխատանքներ, որի ժամանակ ստուգվում են աշխատակիցների և ուսանողների տարհանման ուղիների ճիշտ և անվնաս օգտագործման և առաջին բուժօգնության տրամադրման կարողությունը:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Քոլեջում ներքին շահակիցների հանդեպ հաշվետվողականությունն ապահովելու համար առկա է ներքին հաշվետվողականության ապահովման գրաֆիկական սխեմա *(Հավելված 2)*: Բացի ներքին շահակիցների առջև հաշվետվողկանության ապահովումից, Քոլեջը ապահովում է նաև արտաքին շահակիցների տեղեկացվածությունը Քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ: Այս նպատակով Քոլեջն իր կայքէջի /www.artcol.am/ փաստաթղթեր բաժնում տեղադրում է ինչպես գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերն ու քաղաքականությունները, այնպես էլ հաշվետվությունները:

Հաշվետվություններ առկա են բոլոր ամբիոններում, ստորաբաժանումներում, դրանք ներառում են քանակական և որակական վերլուծություններ, ամփոփումներ, նախանշված են բարելավման քայլերը:

Քոլեջում առաջացած թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվում «Կրթություն» շաբաթաթերթում և Քոլեջի ֆեյսբուքյան էջում: 2022-2023 ուստարվա ընթացքում «Կրթություն» շաբաթաթերթում տեղադրվել է թվով 11 հայտարարություն մանկավարժների թափուր տեղերը համալրելու համար:

Քոլեջի ուսումնադաստիարակչական գծով տնօրենի տեղակալի աշխատանքային պարտականություններից է սոցիալապես անապահով ուսանողների բացահայտումն ու աջակցումը: Այս եղանակով բացահայտվել և 2022-2023 ուստարում իրենց հասանելիք զեղչային արտոնություններից են օգտվել 18 ուսանողներ:

Աջակցություն է ցուցաբերվել հասարակական և միջազգային կազմակերպություն-ների կողմից Քոլեջում անցկացվող միջոցառումներին, դասընթացներին և այլ աշխատանքներին.

1.Մեսրոպ Մաշտոց համալսարան - հանդիպում շրջանավարտների հետ

2.Գլաձորի համալսարան - հանդիպում շրջանավարտների հետ

3.ՀՀ-ում ռուսական տարածաշրջանային ակադեմիա - կրկնակի դիպլոմային ծրագրի ներկայացում

4.ՀՀ ազգային Ագրարային համալսարան – բուսաբուծ. մթերքների վերամշ. պահած. տեխնիկական փափուկ հմտություններ- 4-օրյա դասընթաց

5.Փոփոխությունների թատրոն- ներկայացում (Ագրավաձորի գյուղապետ)

Քոլեջում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն են՝ հարցումները, տնօրեն-կրթության որակի պատասխանատու-ուսանողներ հանդիպումները, Քոլեջի գործունեության վերաբերյալ կայքի՝ հետադարձ կապով ստացված մեկնաբանությունները, միջոցառումները, հաշվետվությունները:

2022-2023 ուստարում 15.09-29.09 ընկած ժամանակահատվածում համապատասխան «Սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման վերաբերյալ բավարարվածության» հարցման կանոնակարգի տեղի են ունեցել հարցումներ Քոլեջի շահակիցների շրջանում: Հարցումը նպատակ ուներ

բարելավել ԱՏՊՔ-ի սոցիալական հարթակներում ծավալած գործունեությունը՝ հաշվի առնելով շահակիցների կարծիքը:

Հարցմանը մասնակցել է 232 շահակից:

Գծ. 34. Սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման վերաբերյալ բավարարվածության հարցման արդյունքների ամփոփ վերլուծությունը:

1. Ձեր կապը Քոլեջի հետ: /232 պատասխան/



2. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում Քոլեջի պաշտոնական տեղեկատվական հարթակներից: /232 պատասխան/



3. Քոլեջի պաշտոնական կայքէջը հագեցված է Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությամբ: /232 պատասխան/



4. Քոլեջի պաշտոնական կայքէջում թարմացումները լինում են ժամանակին: /232 պատասխան/



5. Քոլեջի պաշտոնական կայքէջը մատչելի է դարձնում քոլեջում իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկությունը: /232 պատասխան/



6. Քոլեջի ֆեյսբուքյան էջում տեղադրվող հայտարարությունները նպատակային են և հետաքրքիր: /232 պատասխան/



7. Քոլեջի ֆեյսբուքյան էջը ակտիվ է: /232 պատասխան/



8. Երբևէ օգտվե՞լ եք քոլեջի պաշտոնական կայքէջում կամ ֆեյսբուքյան էջում նախատեսված հետադարձ կապի դաշտից: /232 պատասխան/



9. Եթե այո, ապա ստացե՞լ եք Ձեր դիմումին համապատասխան և գոհացնող արձագանք: Եթե նախորդ հարցին պատասխանել եք ոչ, խնդրում ենք բաց թողնել այս հարցը: /94 պատասխան/



Տեղեկատվության տարածման գործող ուղիների օգտագործումից բացի, սկսել է շահարկվել նաև Տելեգրամյան հարթակը, որի միջոցով ուսանողների շրջանում տեղեկատվության տարածումը և հետադարձ կապը դարձել է առավել արդյունավետ: Հարթակում ներառված են բոլոր կուրսերի ավագները և կուրսի այլ ներկայացուցիչներ: Ուսանողներին ներկայացված 17 ծրագրերին ընդհանուր թվով մասնակցել են 80 ուսանողներ:

Հարթակի միջոցով ուսանողներին տրամադրվել են հետևյալ իրադարձությունների մասին տեղեկատվությունները.

Միջոցառումներ.

1. ՀՀ աշակերտներին Հիրոշիմայի 8-րդ միջազգային երիտասարդական համաժողովին մասնակցելու հրավեր,
2. YOUniter Art Մրցույթ,
3. Անկախության ուժ №2 ճամբար,
4. AI Conf Armenia
5. Հեքեթոն. Վերաձևակերպիր Եվրոպան,
6. Տիեզերական ճամբար 2023,
7. Active Youth, Active Society-Երիտասարդական փոխանակում,
8. DigiTec 2023 : REBOOT.

Կամավորություններ.

1. Sevan Startup Summit,
2. Արամ Խաչատրյանի անվան 19-րդ միջազգային մրցույթ,
3. Երևանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն,
4. Yerevan Fashion Week,
5. Հոգևոր-մշակութային բակային ճամբար,
6. Մաքուր ապագա. շրջակա միջավայրի պաշտպանություն և պլաստիկ թափոններ։

Դասընթացներ.

1. UI/UX դիզայնի անվճար դասընթաց,
2. Բանավեճի ակադեմիա /Debate Academy/,
3. Ինչպե՞ս դառնալ գրաֆիկ դիզայներ։

Քոլեջի Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվել են այցեր, շրջայցեր և մասնակցություններ տարբեր EXPO ցուցահանդեսներին։

Աղ. 15. 2022-2023 ուստարվա ընթացքում Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տարաբնույթ միջոցառումներին ուսանողների մասնակցությունը։

Միջոցառման տեսակ	Միջոցառման անվանում
ճանաչողական այց	ՀՀ Կենտրոնական բանկ
ճանաչողական այց	DIGITAIN ARMENIA
միջազգային ցուցահանդես	FOOD ALCO TASTING HoReCa EXPO 2023
ցուցահանդես	«Կրթություն և կարիերա EXPO 2023»
ճանաչողական այց	Coca-Cola Երջանկության գործարան
փառատոն	YereWineDays
ցուցահանդես	Food and drinks Expo 2023

Դասախոսական և վարչական կազմին տարաբնույթ վերապատրաստումների և միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է «Վայբեր» հարթակում ստեղծված խմբի միջոցով։ Ներկայացված վերապատրաստումներին դիմել են թվով 26 մասնակիցներ։

Քոլեջում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է կայքէջում, տեղադրված են բոլոր միջոցառումների վերաբերյալ հրապարակումները՝ ֆեյսբուքյան էջում։ Գործարկվում է նաև ինստագրամյան էջը։

Կայքէջում թարմացված են գործող փասատթղթերը: Ընդհանուր թվով իրականացվել է 180 հրապարակում /ֆեյսբուքում և ինստագրամում/:

Պաշտոնական կայքէջում թարմացվել է «Դիմորդ» ենթաէջը: Ֆեյսբուքյան էջում յուրաքանչյուր մասնագիտության վերաբերյալ տեղադրվել են հրապարակումներ: Դրանք պարբերաբար վերահրապարակվում են «պատմություն» բաժնում: Տեղադրվել են նաև տեսահոլովակներ՝ «Ընդունելության հրավեր» և «Ոլորտային մասնագիտություններ» թեմատիկաներով:

Քոլեջն ապահովվել է իր ներկայացուցչի մասնակցությունը տեղական և միջազգային սեմինարներին, այդ թվում՝

1. Էրազմուս+ /նախագծերի մշակում/
2. Էրազմուս+ /նախնական և միջին մասնագիտական կրթության նախագծերի մեկնարկային հանդիպում/

Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել է «Մասնագիտական կողմնորոշման» դասընթաց՝ Արտաշատի Սբ. Հովհաննես Ավետարանիչ Առաջնորդանիստ եկեղեցու նախաձեռնությամբ:

Գրադարանում մայիս ամսին տեղի է ունեցել «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի կողմից իրականացվող սեմինար թրաֆիքինգի կանխարգելման ու ռիսկերի նվազեցման նպատակով: Սեմինարն անցկացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսավորմամբ իրականացվող «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում:

Գրադարանում իրականացվել են նաև կինոդիտումներ և քննարկումներ ռասիզմի և գենդերային խտրականության վերաբերյալ:

Բացի նշված քայլերից, Քոլեջը գտնում է, որ հասարակության նկատմամբ սոցիալական պատասխանատվության լավագույն դրսևորումներից մեկը իր ուսանողների մոտ որոշ կարողունակությունների ձևավորումն ու զարգացումն է ներքոլեջային և արտաքոլեջային գործընթացների միջոցով:

Քոլեջի Որակի ապահովման կենտրոնը Կարիերայի կենտրոնի հետ համատեղ իրականացրել է հարցում 2022-2023 ուստարվա շրջանավարտների շրջանում: Հարցման բաղկացուցիչ մասերից մեկը ուղղակիորեն կապված է եղել սեփական կարողունակությունների գնահատման հետ: Ստորև ներկայացված են հարցման արդյունքները:

Գծ.35. Մեփական կարողությունների գնահատման վերաբերյալ հարցին շրջանավարտների պատասխանները /122 շրջանավարտ/:

Գնահատման սանդղակ.

1- Ցածր

2- Միջինից ցածր

3- Միջին

4- Միջինից բարձր

5- Բարձր





Ինչ վերաբերում է ՈւԽ-ի կողմից իրականացված աշխատանքներին՝ ուղղված սոցիալական պատասխանատվության կատարմանը, 2022-2023 ուսումնական տարում ՈւԽ-ն նախաձեռնել և իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ «Սպորտլանդիա»-ներ, «Հիշատակի ցերեկույթ», «Ուսանողի տոն», «Շախմատի առաջնություն», «Մաֆիա», «Գրքի տոն», «Հրաժեշտի միջոցառում» և այլն: Բացի նշված միջոցառումներից, ՈւԽ-ն ձեռնամուխ է եղել նաև «Մեդիա» խմբի և «Բենդի» ձևավորմանը: Վերջինս իր ակտիվ մասնակցությունն է ապահովել Քոլեջում տեղի ունեցած կրթամշակութային միջոցառումներին՝ ապահովելով դրանց երաժշտական մասը: Ինչ վերաբերում է «Մեդիա» խմբին, այն մշտապես աշխատանքներ է տարել Քոլեջի սոցիալական բոլոր հարթակների ակտիվության համար և աջակցել է սոցիալական հարթակների վարման գծով պատասխանատուին:

ԱՏՊՔ-ի զինղեկի կողմից իրականացվել են միջոցառումներ, որոնք նպաստել են աշխատակազմի և ուսանողների շրջանում սոցիալական պատասխանատվության ամրապնդմանը: Ջոկերի հրամանատարների շրջանում իրականացվել է հրահանգչական պարապմունք «Հրամանատարների դերը ռազմական գործընթացի մեջ» թեմայով: Զրույցներ են անցկացվել ջոկերի և բարձր կուրսերի ուսանողների հետ «Անկախության օր», «ՀՀ սահմանների պաշտպանություն խորագրով՝ ուսանողների մեջ սերմանելով հայրենասիրությունն ու մարտունակության ոգին:

Զինղեկի կողմից կազմակերպվել են նաև այլ միջոցառումներ՝ ուղղված ուսանողների իրազեկվածության և արժանապատվության բարձրացմանը.

1. «ՀՀ ԶՈՒ զորատեսակների ստեղծման՝ տանկային, հրետանային զորքերը, նրանց նշանակությունն ու դերը անկախության ապահովման գործում» թեմայով զրույց,
2. «Զինվորական մասնագիտությունը հետխուզական զորքերի և զինվորական բուժծառայողի մասնագիտական օրվան» թեմայով զրույց,
3. «ՀՀ սահմանների պաշտպանությունը ամեն հայի սրբազան պարտքն է» թեմայով զրույց,
4. Հանդիպում ազատամարտիկների և Արցախյան պատերազմի մասնակիցների հետ,
5. «Հայրենական մեծ պատերազմ 1941-1945թթ.» թեմայով զրույց,
6. Նորմացույցերի ընդունում՝ «Ինքնաձիգի քանդում, հավաքում» նորմատիվից,
7. Ուսանողների և շեֆ զորամասի սպաների հետ հանդիպում «Սպաների մասնգիտությունը հերոսական է» թեմայով,
8. Միջոցառում-ցերեկույթ Քոլեջում սովորող և զինծառայություն անցած զինվորների հետ կանանց տոնի՝ Մարտի 8-ի առթիվ,
9. «Սպարապետ Վազգեն Սարգսյանի անցած ուղին բանակաշինության մեջ» թեմայով զրույց,
10. Ռազմադաշտային պարապմունք,
11. Հարգանքի տուրք Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին,
12. «Արիության օր» նվիրված Հայրենական մեծ պատերազմին և Շուշիի ազատագրմանը,
13. «Ավարայրի ճակատամարտ» և «Սարդարապատի հերոսամարտ» թեմաներով զրույց:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

2022-2023 ուստարին աչքի էր ընկնում առկա արտաքին կապերի խորացման և նոր կապերի ձևավորման տեսանկյունից: Այպիսով՝ ստորև ներկայացված են 2022-2023 ուստարում կնքված պայմանագրերը և հուշագրերը կազմակերպությունների հետ:

Կնքված պայմանագրեր՝

1. *<<Արտ Լիգա>> ՍՊԸ*
2. *<<Ինորեյն>>ՍՊԸ*
3. *<<Արարատ Վիրազյան>> Ա/Ձ*
4. *<<Վարդան Շահբազյան>> Ա/Ձ*
5. *<<Անժելա Հախնազարյան>> Ա/Ձ*
6. *<<Լուսիկ Սարգսյան>> Ա/Ձ*
7. *<<Կ. Սահակյան>> ՍՊԸ*
8. *<<Ֆար-Մակ>> ՍՊԸ*
9. *<<Գարիկ Բաղդասարյան>> Ա/Ձ*
10. *<<Տիգրան Վիրասյան>> Ա/Ձ*
11. *<<Արթուր Մկրտչյան>> Ա/Ձ*
12. *<<AG Մոբայլ>> Ա/Ձ*
13. *<<Մարիամ Սահակյան>> Ա/Ձ*
14. *<<Շահումյան-Վին>> ՍՊԸ*
15. *<<Էլեկտրոցանցեր>>*
16. *Արարատի մարզպետարան*
17. *<<Զեթ-պրոֆիլ>> ՍՊԸ*
18. *<<Շահարտ>> ՍՊԸ*
19. *<<Գրանտ Դենտ>>ՍՊԸ*
20. *<<Մոնեյ Սեյֆ>> ՍՊԸ*
21. *<<Ռուբինաս>> ՍՊԸ*
22. *<<Սամարտ Քոնսալթինգ>> ՍՊԸ*
23. *<<Արտ Ստոմ>> ՍՊԸ*
24. *Արտաշատի քաղաքապետարան*

Կնքված հուշագրեր՝

1. *<<Ընկերություն 1982>> ՍՊԸ*
2. *<<Մեսրոպ Մաշտոց>> համալսարան*
3. *<<Արթսոֆթ>>ՍՊԸ*
4. *<<Այ-թի Լոջիք Տեք>>*
5. *<<Պուլմոմեդ>> ՍՊԸ*
6. *<<Լիգա>> ՍՊԸ*
7. *<<Գարանտ Դենտ>> ՍՊԸ*
8. *<<Ֆարմ-Մակ>> ՍՊԸ*
9. *<<Ինորեյն>> ՍՊԸ*
10. *<<Հայաստանի հաշվապահների ասոցացիա>>*

Կնքված պայմանագրերի հիման վրա ուսանողներն իրենց նախաավարտական պրակտիկան անց են կացրել Քոլեջի գործընկեր-կազմակերպություններում: Պրակտիկաների որակի բարձացրման և ֆինանսական գործիքների արդյունավետ օգտագործման տեսանկյունից, որոշում է ընդունվել պրակտիկաների անցկացման համար գործընկեր կազմակերպություններին տրամադրել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Որպես առաջին փորձ, 2022-2023 ուտարում «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության ուսանողների պրակտիկայի համար համապատասխան կազմակերպությանը փոխանցվել է 125.000 դրամ:

Քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնը Կարիերայի կենտրոնի հետ համատեղ իրականացրել են հարցումներ գործատուների շրջանում:

01.11-30.11/2022թ. ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան «Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության գնահատման և քոլեջի հետ համագործակցության հնարավորությունների հարցման» կանոնակարգի, գործատուների շրջանում կատարվել են օնլայն հարցումներ՝ ուղղված վերջին երեք տարիների քոլեջի շրջանավարտների գնահատմանը, ինչպես նաև քոլեջի հետ հնարավոր համագործակցությունների մեկնարկին և ընդլայմանը:

Հարցումն անցկացվել է օնլայն տարբերակով՝ գործատուների շրջանում նոյեմբերի 1-ից սկսած մեկամսյա ժամանակահատվածում: Ընդհանուր ընտրանքը կազմել է 8 գործատու:

Հարցումը բաղկացած է եղել երկու հիմնական մասից՝ շրջանավարտների որակի գնահատման, քոլեջի հետ հնարավոր համագործակցության հնարավորությունների, ինչպես նաև առաջարկություններից՝ ուղղված ուսանողների պատրաստվածության բարձրացմանը:

«Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության գնահատման և Քոլեջի հետ համագործակցության հնարավորությունների հարցման» պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքում ստացվեց, որ բոլոր բնութագրիչները հատել են 80% բավարարվածության շեմը:

Նշված հանգամանքը փաստում է, որ հարցմանը մասնակցած գործատուները լիովին բավարարված են եղել Քոլեջի շրջանավարտների պատրաստավածության մակարդակից և դրականորեն են գնահատել նրանց ցուցաբերած մասնագիտական վարքը:

Չնայած վերը նշվածին, հարցումը թույլ է տվել վեր հանել որոշակի խնդիրներ, որոնց լուծման պարագայում քոլեջը կգրանցի առաջընթաց ՄԿԾ վերջնարդյունքի լիակատար ապահովման բնագավառում: Կոնֆիդենցիալության պահպանման համար նշված առաջարկությունները վերլուծության մեջ չեն մանրամասվում:

Գծ.36. Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության գնահատման /8 գործատու/:



«Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության գնահատման և քոլեջի հետ համագործակցության հնարավորությունների հարցման» պատասխանների համապարփակ վերլուծության արդյունքը ցույց տվեց, որ գործատուներն իրենց պատրաստակամությունն են հայտնել համագործակցելու քոլեջի հետ՝ որոշակի մասնագիտական ուղղություններով և ենթաուղղություններով:

Ստացված արդյունքների հիման վրա բացահայտվել են փոխհամագործակցության նոր եզրեր, որոնց իրագործումը բազմափուլ գործընթաց է, պահանջում է երկկողմ պատասխանատվություն և ընթացիկ վերահսկողություն:

Գծ.37. «Պատրա՞ստ է արդյոք Ձեր կազմակերպությունը համագործակցելու Քոլեջի հետ ստորև նշված ուղղություններով» հարցին գործատուների պատասխանները /8 գործատու/:






Սովորողների պրակտիկայի կազմակերպում
13%
25%
62%
Արդեն համագործակցում ենք
Պատրաստ ենք համագործակցել
Չի հետաքրքրում


Համատեղ միջոցառումների անցկացում (քննարկումներ, կլոր սեղաններ)
13%
37%
50%
Արդեն համագործակցում ենք
Պատրաստ ենք համագործակցել
Չի հետաքրքրում


Մասնակցություն կրթական ծրագրերի և դասընթացների մշակմանն ու իրականացման աշխատանքներին
25%
37%
38%
Արդեն համագործակցում ենք
Պատրաստ ենք համագործակցել
Չի հետաքրքրում

Որպես արտաքին կապերի խորացման և միջազգայնացման գործընթացի մեկնարկ, Քոլեջի Կարիերայի կենտրոնը մշակել է «Արտաքին կապերի և միջազգայնացման» քաղաքականություն, որը գործարկվելու է հաջորդ ուսումնական տարվա սկզբից: Քաղաքականությունը իրավական ամուր հենք է հանդիսանում և ցույց է տալիս, Քոլեջի ամրացող հետաքրքրություններն այս ուղղությամբ:

Փորձ է տարվում ստեղծել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության իրական հնարավորություններ: Էլեկտրոնային հասցեների միջոցով ուղարկվել են նամակներ *(Հավելված 4)* արտասահմանյան 23 ՄԿՈՒ հաստատություններին: Ստացվել է երկու հետնամակ (կարմիր տառատեսակով նշվածները), որոնցից մեկը պարունակում է համագործակցային բնույթ :

Աղ. 16. ՄԿՈՒ արտասահմանյան հաստատությունները, որոնց հետ Քոլեջը փնտրում է համագործակցային եզրեր:

	Name	Address	E-mail	Web-page
		Institutions in Georgia		
1.	Community College "Akhali Talgha"	Kobuleti, Rustaveli st. # 154 Adjara	**info@kpc.ge**	kpc.ge
2.	Community College Information Technology Academy	3 Guram Panjikidze St., Tbilisi .0160	**info@itvet.ge**	itvet.ge
3.	Community College Gldani Vocational Training Center	Tbilisi, Ilia Vekua Street, №44	**profgldaniedu@gmail.com**	profgldani.ge
4.	Community College "Mermisi"	9a Davit Guramishvili Dead End	**Nona_gudushauri@mermisicollege.edu.ge**	mermisicollege.edu.ge
5.	Vocational College "Black Sea"		**bleqsi@gmail.com**	blacksea.edu.ge
6.	Vocational College "Modusi"	Georgia, Rustavi, Zh. Shartava # 4 Postcode: 3700	**info@modusi.ge**	modusi.ge
7.	Avicenna Medical and Applied Science College	N. Khosharauli Street N 30a. Tbilisi. Georgia	**avicennacollege19@gmail.com**	avicenna.edu.ge
8.	Georgian-American Nursing College	65 Ketevan Tsamebuli Ave. Tbilisi, Georgia (Postal Code: 0144)	**info@ganc.ge**	ganc.ge
		Russia		
9.	Ростовский-на-Дону государственный колледж связи и информатики	Ростов-на-Дону (Южный федеральный округ, Ростовская область), ул. Тургеневская, д. 10/6	**college@rksi.ru**	rksi.ru
10.	Колледж экономики, права и информационных технологии	Москва, ул. Нижегородская, д. 32, стр. 16	**kepiit@yandex.ru**	kepiit.ru
11.	Ногинский филиал Московского областного	Ногинск (Московская область, Ногинский район), Электростальское ш., д. 1	**mz_momk3_ngsk@mosreg.ru**	noginsk.momk3.ru

	медицинского колледжа № 3 имени Героя Советского Союза З.Самсоновой			
12.	Новосибирский лицей питания	Новосибирск (Сибирский федеральный округ, Новосибирская область), ул. Б. Хмельницкого, 67	**nlp@edu54.ru**	prof-licey66.ru
13.	Чапаевский химико-технологический техникум	Чапаевск (Приволжский федеральный округ, Самарская область), ул. Железнодорожная, д. 47	**himtehnikum@mail.ru**	chtt.org
14.	Казанский технологический колледж Казанского национального исследовательского технологического университета	420101, г. Казань, , ул. Рихарда Зорге, д. 13а.	**himtehnikum@mail.ru**	kstu.ru
15.	Костромской торгово-экономический колледж	Кострома (Центральный федеральный округ, Костромская область, Костромской район), ул. Долматова, д. 25а	**ktek44@yandex.ru**	ktek-kostroma.ru
16.	Казанский колледж технологии и дизайна		**ktlp1@yandex.ru**	kktd.ru
17.	Ярославский колледж управления и профессиональных технологий	Тутаевское ш., 31А, Ярославль, Ярославская обл.	**ykuipt.yaroslavl@yarregion.ru**	ytuipt.ru
18.	Медицинский колледж №1	119071, Москва, Ленинский пр-т, д. 35 “А”	**mk1@zdrav.mos.ru**	https://medcollege.ru/
19.	Медицинский колледж №7	Николоямская ул., д.33, стр. 1 Москва, Россия, 109004	**mk7@zdrav.mos.ru**	https://medcollege7.ru/
20.	Медицинский колледж №2		**mk2@zdrav.mos.ru**	https://xn--2-stbf.xn--p1ai/
21.	Медицинский колледж №2		**mk5@zdrav.mos.ru**	https://www.mk-5.ru/
22.	Красноярский базовый медицинский колледж им. В.М. Крутовского	660062, г. Красноярск, ул Вильского, 13	**kbmc@mail.ru**	kbmc.ru
23.	Фармацевтический техникум	197198, г. Санкт-Петербург, Татарский переулок, дом 12-14, лит. А (м. Горьковская или м. Спортивная)	**spbfarmt@spbfarmt.ru**	spbfarmt.pharminnotech.com

Ինչ վերաբերում է միկրոմակարդակով տարվող արտաքին կապերի ձևավորմանն ու զարգացմանը, Քոլեջը մշտապես հավաքագրում, թարմացնում և պահպանում է «Ուսանողների», «Շրջանավարտների» և «Գործատուների» գրադարանները: Սրանք այն տեղեկատվական բազաներն են, որոնց հիման վրա Քոլեջն իրականացնում է իր արտաքին քաղաքականությունը:

«Ուսանողների գրադարան»-ը համալրվում և թարմացվում է յուրաքանչյուր տարի՝ «Առաջին կուրսի/նոր ընդունված ուսանողների» հարցման միջոցով: Հարցման ձևաթուղթը ներկայացված է *Հավելված 5*-ում: Բազան ենթակա չէ հրապարակման՝ ելնելով տեղեկատվության անվտանգ պահպանման նկատառումներից:

«Շրջանավարտների գրադարանը»-ը համալրվում և թարմացվում է յուրաքանչյուր տարի՝ «Շրջանավարտի կողմից քոլեջից բավարարվածության գնահատման» հարցման միջոցով: Հարցման ձևաթուղթը ներկայացված է *Հավելված 6*-ում: Բազան ենթակա չէ հրապարակման՝ ելնելով տեղեկատվության անվտանգ պահպանման նկատառումներից:

«Գործատուների գրադարան»-ը իր մեջ պարունակում է տեղեկատվություն, որը հավաքագրվում է ինչպես *Հավելված 7*-ում նշված հարցման միջոցով, այնպես էլ կնքված պայմանագրերի/հուշագրերի, ձեռք բերված գրավոր և բանավոր պայմանավորվածությունների հիման վրա:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Որակի ներքին ապահովման համակարգի գործունեության և Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից կազմակերպված և իրականացված գործընթացների վերաբերյալ անդրադարձ է կատարվել նախորդ բոլոր բաժիններում:

Հավելված 1

Հաստատում եմ՝
Կառավարման խորհրդի նախագահ _____
«23» 08 2021թ.

«ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Քոլեջի տնօրեն Իս. Վարդանյան
«23» 08 2021թ.



Հավելված 2


ՀՀ ԿԳՄՄՆ ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿԻ ՆԵՐՔԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳԱՐԱՖԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
Դասախոս
Ուս. մասի վարիչ
Մեթոդիստ
Ամբիոնի վարիչ
Պրակտիկայի բաժնի վարիչ
Գրադարանավար
Կուրսղեկներ
Լաբորանտ
Ուս. օժանդ և սպաս. Անձ.
Պահեստապետ
Բուժքույր
Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
Ուսումաարտադրական աշխատանքների գծով տն. տեղակալ
Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տն. տեղակալ
Վարչտնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
Տնօրենի օգնական
Հաշվետար
Գնումների համակարգող
Հաշվապահ
Կրթության որակի պատասխանատու
Կադրերի բաժնի տեսուչ
Գործավար
Զին. ղեկ, ՔՊ շտաբի պետ
Քոլեջի տնօրեն
Իրավախորհրդատու
Արխիվավար
Կարիերայի ուղղորդման պատ
Կառավարման խորհուրդ
Կադրերի բաժնի վարիչ

Հավելված 3

ՈՒԽ-Ի ԱՆՎԱՆԱԿԱԶՄ

Անուն / ազգանուն	Մասնագիտությունը և կուրսը	Պաշտոնը
Շուշաննա Կարապետյան	0411.01.5 II*	Նախագահ
Արտակ Խաչատրյան	0613.01.5 II*	Փոխնախագահ
Մերի Հարությունյան	0411.01.5 I*	Քարտուղար
Օլգա Առաքելյան	1012.02.5 I*	Անդամ
Նազելի Հակոբյան	1012.02.5 I*	Անդամ
Աննա Մնացականյան	1012.02.5 I*	Անդամ
Սեդա Պողոսյան	1012.02.5 I*	Անդամ
Լարիսա Անտոնյան	0916.01.5 II*	Անդամ
Ասյա Ավագյան	0916.01.5 II*	Անդամ
Լինա Պետրոսյան	0613.02.5 I*	Անդամ
Մերի Եսայան	0613.02.5 I*	Անդամ
Արևիկ Հարությունյան	0613.02.5 I*	Անդամ
Ցողետա Գրիգորյան	0613.02.5 I*	Անդամ
Վարդուհի Խաչատրյան	0613.02.5 I*	Անդամ
Էլեն Վրթանեսյան	1012.02.5 II*	Անդամ
Լիանա Սայադյան	0613.02.5 II*	Անդամ
Մարո Պողոսյան	0613.01.5 II*	Անդամ
Գրետա Մկոյան	0916.01.5 I*	Անդամ
Միլենա Միրզոյան	0411.01.5 II*	Անդամ
Ծաղիկ Միքայելյան	0613.01.5 II*	Անդամ
Սիրուշիկ Պաչիկովա	0411.01.5 II*	Անդամ
Սաթենի Սիրականյան	0411.01.5 II*	Անդամ
Անի Ալավերդյան	0411.01.5 II*	Անդամ
Արման Մուրադյան	0911.01.5 II*	Անդամ
Աննա Սահակյան	0613.02.5 I*	Անդամ
Ռուզան Չոբանյան	0613.02.5 I*	Անդամ

Զինա Ղարիբյան	1012.02.5 II*	Անդամ
Աննա Պողոսյան	1012.02.5 II*	Անդամ
Կարինե Խաչատրյան	0916.01.5 I*	Անդամ
Լաուրա Մարիտիրոսյան	0916.01.5 I*	Անդամ

Dear Colleague,

Warm greetings from Artashat, Armenia, and the Ararat Regional State College!

I am reaching out to you with a sincere request for a collaboration opportunity. Ararat Regional State College is an esteemed institution that offers a range of vocational education and training programs, including accounting, nursing, pharmacy, computer programming, web-design, dress modeling and design, and cooking.

We strongly believe that there is immense potential for collaboration between our institutions in various areas, such as the implementation of joint educational programs, course organization, exchange of experiences, and other mutually beneficial directions.

We are excited about the prospect of partnering with your institution and leveraging our combined strengths to enhance the educational experience for our students. By working together, we can create unique opportunities that will enable our students to thrive and succeed in their chosen fields.

I genuinely hope that your institution shares our enthusiasm for collaboration and will be open to exploring this opportunity further.

Thank you for considering our proposal. I look forward to the possibility of collaborating and creating a valuable partnership between our institutions.

Best regards.

Arthur Davtyan
Career Development Department
--
Ararat Regional State College
www.artcol.am
156 Atabekyan, Artashat, Armenia,
Tel. +374(0235)24081, +374(0235)24080

Теплые приветствия из Арташата, Армения, и Араратского регионального государственного колледжа!

Я обращаюсь к вам с искренней просьбой о возможности сотрудничества. Араратский региональный государственный колледж – престижное учебное заведение, предлагающее широкий спектр программ профессионального образования и подготовки, включая бухгалтерию, медицинское обслуживание, фармацевтику, программирование, веб-дизайн, моделирование и дизайн одежды, а также кулинарию.

Мы твердо верим в огромный потенциал сотрудничества между нашими учреждениями в различных областях, таких как реализация совместных образовательных программ, организация курсов, обмен опытом и другие взаимовыгодные направления.

Мы взволнованы перспективой сотрудничества с вашим учебным заведением и использования наших совместных сил для улучшения образовательного опыта наших студентов. Совместными усилиями мы можем создать уникальные возможности, которые помогут нашим студентам успешно реализоваться в выбранных ими областях.

Искренне надеюсь, что ваше учебное заведение разделяет наше энтузиазм по поводу сотрудничества и будет открыто к дальнейшему исследованию этой возможности.

Спасибо за рассмотрение нашего предложения. С нетерпением жду возможности сотрудничества и создания ценного партнерства между нашими учреждениями.

С наилучшими пожеланиями.

Артур Давтян
Отдел развития карьеры
--
Араратский региональный государственный колледж
www.artcol.am
156 Атабекян, Арташат, Армения
Тел. +374(0235)24081, +374(0235)24080

Հավելված 5

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ամիս, ամսաթիվ _____

Հարգելի՛ ուսանող, **բարի գալուստ ԱՏՊՔ**, խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը, որը կօգնի Քոլեջին՝ Ձեզ ավելի հեշտորեն ներգրավելու Քոլեջի ընթացիկ գործընթացներին, ինչպես նաև հետագայում՝ ըստ արժանվույնս գնահատելու Ձեր տաղանդն ու կարողությունները։

1. **Անուն, ազգանուն, հայրանուն՝**

_____

2. **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝**

☐ ☐ ☐

3. **Սեռ՝**
   - **արական** ☐
   - **իգական** ☐

4. **Քաղաքացիություն՝**
   - **ՀՀ** ☐
   - **Այլ, նշել** ☐ _____

5. **Մշտական բնակության վայր (քաղաք, մարզ, երկիր)՝**

_____

_____

6. Էլեկտրոնային փոստի հասցե՝

_____

7. Հեռախոսահամար՝

_____

8. Որտե՞ղ եք սովորել մինչև Քոլեջ ընդունվելը, ե՞րբ եք ավարտել:

_____

9. Ո՞րն է Ձեր մայրենի լեզուն:

- Հայերեն ☐
- Ռուսերեն ☐
- Անգլերեն ☐
- Այլ, նշել ☐ _____

10. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում և ինչպե՞ս կգնահատեք այն: Գնահատել 1-3 բալային համակարգով:

1-հասկանում եմ

2-բանավոր և գրավոր հաղորդակցվում եմ

3-բանավոր և գրավոր գերազանց հաղորդակցվում եմ

- Ռուսերեն
- Անգլերեն ☐
- Այլ, նշել ☐ _____

11. Հաճախե՞լ եք որևէ արվեստի կամ արհեստակցական խմբի:

☐

- Սպորտ
- Պար ☐
- Երգ ☐
- Աշակերտական խումբ ☐
- Այլ ☐ (նշել արվեստի տեսակը) _____

11.1. Եթե այո, ապա ի՞նչ հաջողությունների եք ունեցել տվյալ բնագավառում :)

_____

_____

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ամիս, ամսաթիվ _____

Հարգելի՛ շրջանավարտ, հարցումն իրականացվում է Քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայություններից բավարարվածության գնահատման և Ձեր ընթացիկ կարգավիճակի վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրման նպատակով: Հարցման անցկացումը և վերահսկումը ապահովում է Քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնը:

Ակնկալում ենք հարցերին տրված պատասխանների առավելագույն օբյեկտիվություն և անաչառություն:

Մասնագիտությունը՝----------
Անուն, ազգանունը՝ ----------
Հեռախոսահամարը՝ ----------
Էլ. փոստի հասցեն՝ ----------

1.Աշխատու՞մ եք:

- Այո ☐
- Ոչ ☐

Եթե այո, ապա Ձեր մասնագիտությա՞մբ:

- Այո ☐ նշել որտեղ _____
- Ոչ ☐ նշել որտեղ _____

Եթե աշխատում եք Ձեր մասնագիտությամբ, ապա Ձեր մասնագիտական կարողությունները Ձեզ բավարարեցի՞ն աշխատաշուկայում իրացվելու համար:

- Այո ☐
- Մասամբ ☐
- Ոչ ☐

Եթե չեք աշխատում Ձեր մասնագիտությամբ, ապա ի՞նչն է պատճառը:

- փնտրել եմ, չեմ գտել ☐
- չեմ փնտրել ☐
- մասնագիտական կարողություններս չեն բավարարել գործատուի պահանջներին ☐
- այլ _____

Ապագա ուսանողներին խորհուրդ կտա՞ք ընտրել Ձեր մասնագիտությունը:

- Այո ☐
- Ոչ ☐ նշել պատճառը _____

2. Շարունակու՞մ եք կրթությունը ԲՈՒՀ-ում:

- Այո ☐
- Ոչ ☐

Եթե այո, ապա ի՞նչն է պատճառը:

- միևնույն մասնագիտության որակավորման ավելի բարձր աստիճան ☐
- նոր մասնագիտության ձեռքբերում ☐
- գործատուի կողմից պարտադիր պահանջ ☐
- այլ _____

Առաջարկություններ և նշումներ:

_____

_____

_____

Շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար և ակնկալում ենք, որ հետագայում Դուք մշտապես կապ կպահպանեք Ձեր Քոլեջի հետ 💙:

Հավելված 7

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ամիս, ամսաթիվ_____

Հարգելի՛ Գործատու,

Արարատի տարածաշրջանային պետական քոլեջը (այսուհետ՝ Քոլեջ) անցկացնում է հարցում, որի ***նպատակն է պարզել գործատուների բավարարվածությունը Քոլեջի շրջանավարտների ուսուցման, պատրաստվածության որակից և որոշել գործունեության տարբեր ոլորտներում համագործակցության հնարավորությունները:***

Ակնկալում ենք Ձեր ակտիվ և անկողմնակալ մասնակցությունը հարցմանը:

12. Ձեր անուն, ազգանունը՝

_____

13. Կազմակերպության անվանումը՝

_____

14. Ձեր պաշտոնը՝

_____

15. Կազմակերպության հեռախոսահամարը՝

_____

16. Կազմակերպության գործունեության ոլորտը՝

_____

17. Կազմակերպությունում աշխատող Քոլեջի շրջանավարտների թիվը՝

_____

18. Քոլեջի շրջանավարտների պատրաստվածության մակարդակը կարելի է գնահատել՝

- բարձր ☐
- միջինից բարձր ☐
- միջին ☐
- միջինից ցածր ☐
- ցածր ☐

19. Խնդրում ենք 5 բալանոց սանդղակով գնահատել Քոլեջի շրջանավարտի որակը՝ Ձեր կազմակերպությունում նրան աշխատանքի ընդունելու և կարիերայի աճի տեսանկյունից:

1- ցածր
2- միջինից ցածր
3- միջին
4- միջինից բարձր
5- բարձր

	Բնութագրիչներ	***1***	***2***	***3***	***4***	***5***
1	Մասնագիտական հմտություններ և ունակություններ					
2	Մասնագիտության հանդեպ մոտիվացիա					
3	Աշխատասիրություն					
4	Հաղորդակցման հմտություններ					
5	Կրեատիվություն					
6	Թիմային աշխատանքի ունակություն					

20. Պատրա՞ստ է արդյոք Ձեր կազմակերպությունը համագործակցելու Քոլեջի հետ ստորև նշված ուղղություններով:

Համագործակցության հնարավոր ուղղությունները		*Արդեն համագործակցում ենք*	*Պատրաստ ենք համագործակցել*	*Չի հետաքրքրում*
1	Քոլեջի շրջանավարտների աշխատանքի ընդունում			
2	Սովորողների պրակտիկայի կազմակերպում			
3	Համատեղ միջոցառումների անցկացում (քննարկումներ, կլոր սեղաններ)			
4	Մասնակցություն կրթական ծրագրերի և դասընթացների մշակմանն ու իրականացման աշխատանքներին			
5	Կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությունը Քոլեջի ուսումնական գործընթացին (դասավանդում, պրակտիկայի անցկացում և այլն)			

21. Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեք կատարել Քոլեջի սովորողների պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

_____

_____

Լրացուցիչ նշումներ:

_____

_____

Կազմակերպության ղեկավար / _____/ _____

(ստորագրություն) (անուն,ազգանուն)

Հավելված 8


1-ԻՆ ՀԱՐԿԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ
ԵԼՔ
UP
Պայմանական նշաններ
Տարհանման ելք
Տարհանման ելքի ուղղություն
Տարհանման ուղղություն
Հակահրդեհային սեղմակներ
Հրշեջ սարքավորումներ
Կրակմարիչներ
Էլեկտրական վահանակ
1 Լսարաններ
2 Բուժկետ
3 Սանհանգույց
4 Ուսուցչանոց
5 Փոխտնօրենի սենյակ
6 Գրադարան
7 Արխիվ
8 Սմբիոն
9 Հանդերձարաններ
10 Մարզասրահ
11 Մարզադահլիճ

2-ՐԴ ՀԱՐԿԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ



Պայմանական նշաններ

→	Տարհանման ուղղություն
	Աստիճաններով ներքև
	Հակահրդեհային սեղմակներ
	Կրակմարիչներ
	Էլեկտրական վահանակ

1	Լսարաններ
2	Անձնիններ
3	Սանհանգույց
4	Տնօրենի օգնականի սենյակ
5	Ընդունարան
6	Տնօրենի սենյակ
7	Պրակտիկայի բաժին
8	Հաշվապահություն
9	Դահլիճ
10	Խորհրդարանական նանանգիտացված լսարան
11	Նիստերի դահլիճ


ԱՐՀԵՍՏԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ
ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ
Պայմանական նշաններ
ԵԼՔ
Տարհանման ելք
Տարհանման ուղղություն
Տարհանման ելքի ուղղություն
Կրակմարիչներ
Հակահրդեհային սեղմակներ
Էլեկտրական վահանակ
1 Սարքեր
2 Կարի մասնագիտացված սարք
3 Կոմոդելոգիայի մասնագիտացված սարք
4 Արհեստանոցներ
ԵԼՔ
ԵԼՔ
ԵԼՔ
ԵԼՔ

Մասնագիտության անվանումը Դասիչը	Սով. թիվը	Պետական ամփոփիչ ստուգման արդյունքներ 2020-2021				2021-2022		
		Գեր	Լավ	Բավ.		Գեր	Լավ.	Բավ.
Միջին մասնագիտական կրթություն								
0411.01.5- Հաշվապահական հաշվառում	25	72.2 %	27.7 %	--	14	50%	43%	7%
1041.01.5 - Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	16	12.5 %	65.62 %	21.87 %	21	23%	66%	11%
0613.01.5- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	13	38.46 %	61.53 %	--	30	20%	73%	7%
0212.02.5-Հագուստի մոդելավորում և նախագծ.				--	11	54%	46%	--
1012.02.5 - Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	18	30.55 %	58.33 %	11.10 %	15	33%	53%	14%
0613.02.5-Համակարգչային գեղարվեստական նախագծում	20	60 %	27.5%	12.5%	20	35%	50%	25%
0916.01.5- Դեղագործություն	22	47.72 %	29.54 %	22.72 %	5	100%	--	--
Նախնական /արհեստագործական / մասնագիտական կրթություն								
1013.04.4- Խոհարարական գործ					22	19%	50%	31%

Հանրակրթական բաղադրիչի պետական ավարտական քննություններ,

/արդյունքները տոկոսներով / 2021-2022 ուստարում

Մասնագիտության անվանումը և դասիչը	Կուրս սովոր թիվը	Քննական առարկաների անվանումները											
		Հ.լեզու և հայ գրականություն			Հ.պատմություն			Մաթեմ. Երկրաչ.			Ֆիզկուլտուրա		
		Գ.	Լ.	Բ.	Գ.	Լ.	Բ.	Գ.	Լ.	Բ.	Գ	Լ	Բ
0411.01.5 - Հաշվապահական հաշվառում	I / 25	24	72	4	16	64	20	28	64	8	88	12	
0613.01.5 - Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	I / 25	--	48	52	8	60	32	16	64	20	72	18	--
0613.02.5 – Համակարգչային գեղարվեստական նախագծում	I / 20	20	80	--	25	75	--	25	65	10	100	--	--
1012.02.5 – Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	I / 25	--	16	84	--	16	84	--	16	84	100	--	--
0916.01.5 – Դեղագործություն	I / 20	10	35	55	20	20	60	--	40	60	70	30	--
0911.01.5 – Ատամնատեխնիկական գործ	I / 20	--	25	75	--	35	65	--	30	70	100	--	--
1041.01.5 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	I/ 25	--	10	96	--	16	84	--	8	92	100	--	--

Քոլեջի հիմնական գործողությունները՝ ըստ առաքելության ապահովման 10 հիմնական ուղղությունների

Կառավարումն ու վարչարարությունը

1. Մշակել մշտադիտարկման անցկացման քաղաքականություն,
2.Մշակել ֆունկցիոնալ մարմինների աշխատանքների մշտադիտարկման, գնահատման և աշխատանքների բարելավման կարգ,
3. «Իրազեկվածության կայուն զարգացում»-ը հանրակրթական բաժնի, ամբիոնների աշխատանքային պլաններում ներառել որպես մշտական գործառույթ,
4.Բարելավել հանրակրթական բաժնի, ամբիոնների աշխատանքը՝ հինվելով մշտադիտարկման արդյունքների գնահատման վրա,
5. Ինքնագնահատումը ներառել որպես մշտադիտարկման գործիք:

Մասնագիտության կրթական ծրագրերը

1.Վերանայել պրակտիկայի հաշվետվության պաշտպանության գնահատման ձևաչափը,
2.Մշակել պորտֆոլիոների կազմման և գնահատման կարգ,
3.Բարելավել պորտֆոլիոների կառուցվածքը և բովանդակությունը՝ հիմնված մշտադիտարկման արդյունքների գնահատման վրա,
4.Վերանայել դասալսման ընթացակարգը,
5.Ներդնել ինքնուրույն աշխատանքներում ակադեմիական ազնվության ապահվման գործուն մեխանիզմ:

Ուսանողները

1.Հրաժարվել կուրսղեկների ինստիտուտից՝ ուղղված ավագ-ՈՒԽ-վարչական պատասխանատուներ կապի ամրապնդմանը,
2.Ապահովել Քոլեջի խորհուրդներում ներգրավված ուսանողների կարծիքների և խնդիրների անկաշկանդ բարձրաձայնումը նիստերի ընթացքում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

1.Միջնորդել ժամանակակից կրթարժեքներին համապատասխան վերապատրաստում-ներին Քոլեջի դասախոսական կազմի մասնակցությունը,
2.Մշակել ՊԴ համաբովանդակ գնահատման ընթացակարգ,

3.Կիրառել համապատասխան լծակներ բավարարվածության շեմը չհաղթահարած դասախոսների համար։

Հետազոտությունը և զարգացումը

1.Վերանայել կուրսային աշխատանքների կազմակերպման ընթացակարգը,
2.Ներդնել դիպլոմային աշխատանքների իրականացման ընթացակարգ,
3.Ներդնել ստեղծագործական մտքի և վերլուծական մտածողության զարգացմանը նպաստող հանձնարարականներ։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

1.Ձեռնարկել քայլեր համակարգիչների ռեսուրսաբազան թարմացնելու համար,
2.Ձևավորել գործատուների հետ ռեսուրսների համատեղ օգտագործման առաջարկներ։

Հասարակական պատասխանատվությունը

1.Բարձրացնել աշխատանքային պլան-հաշվետվություն համադրելիությունը։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

1.Ընդլայնել տեղական համագործակցության շրջանակները,
2.Փնտրել միջազգային համագործակցության ուղիներ։